ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ —ԹԻՒ 3739 1884 ՀՈԿՏԵՄԲԵՐ 13

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՐԱՖՖԻ ԵՒ ՀԱՅ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆԸ..... Ա. Ա.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Քաղաքական կուսակցութիւններն Յեւրոպա և Յամերիկայ* (Ա.)..... Բ. Ք.
ՊԱՏՄԱԿԱՆ. *Զինացիք նկարագրեալ Յինքեանց* (ԶԷՆԿ—ՔԻ—ԹՈՆԿ) *Թարգմ.* Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ. *Տաղ Գարնան*..... ԱՒԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔ
ԳՈՒՆԷՅԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ..... Լ. Բ.
ՎԷՊ. *Մաալէնի մեղքը* (ԲՕԼ ԱԼՊԱՆ) *Թարգմանութիւն*.....
ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. *Արտաքին, Ներքին, Ազգային*.....
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՕՆԹԷՐԷՆ) *Թարգմ.*..... Մ. ՀՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս եւ գաւառներու —տարեկան.....կէս ոսկի Օսման.
» » վեցամսեայ.....Քառ. » »
Մէկ թերթին գինն է.....60 փարայ
Օտար քաղաքաց համար տարեկան.....12 ֆրանք
» » վեցամսեայ..... 6 »
Թղթատարութեան ծախք տարեկան.....Դահ. արծ. 15
Վեցամսեայ..... » » 7½

Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս լրագրաց
Գալաթիա, Նորատունկեան խան

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1884

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 12 Հոկտեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքայի)	110
3 » » » (վճռվնկն)	109 7/8
3 » Բարիզի » (պանքայի)	22 87 1/2
» » » (վճռվնկն)	22 95

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Քօնսոլիտէ

Երեկ երեկոյ գոցուեցաւ (Գ. Կ.) դՀկն.	8 26
Պօրսային գոցուելէն վերջը » »	8 26 1/2
Բերայի մէջ » »	
Առաւօտուն բացուեցաւ » »	8 28
Բարձրագոյն գին » »	8 28
Նուազագոյն » »	8 27
Կէս օրին » »	8 27
Իւնիֆիէ Եգիպտական	69
Երեկ երեկուն գոցուեցաւ	68 15
Բերայի մէջ	—
Այս առաւօտ բացուեցաւ	68 25
Կէս օրին	68 25
Հէվալէսիզ	17 1/2
Ըէքօր դօնսոլիտէի	—
» իւնիֆիէի	—
Փոխառութիւն 1863 (Գ. Կ.) ֆր.	65
» 1865 » »	53
» 1869 » »	46 25
» 1873 » »	42
Պօն տիւ Թրէզոր Անգլ. Լ.	19 25
Ռումելիի երկաթուղի ֆր.	43 75
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ »	370
Բաժնեթուղթ Լաւրիոմի »	78

ԲԱԺՆԵՏՈՄԱՔ

Սօսիէթէ ժէնէրալ Անգլ. Լ.	3 30
Քրէտի ժէնէրալ (Գ. Կ.) Օսմ. Լ.	6 20
Պանք տը Գոնս »	5 30
Սօս. Շանժ է վալէօր Օսմ. Լ.	3 28
Թրամուէյ » »	287 1/2

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՅ

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 ֆրանքնոց	»	87 30
Անգլիական ոսկի	»	110 0
Բօլ Իմբերիալ	»	90 8
Քրիմից	»	51 25
Ռուպլի թղթադրամ	»	8 89
» արծաթ	»	89 32
Ֆիօրին	»	9
Մէճ. արծ. (տարբ.)	»	107 37
Վէցնոց	»	103 5
Հինգնոց	»	103 10
Մէթալիք	»	98 20
Պղինձ	»	800
Թղթադրամ	»	3000

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 23 Հոկտեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսոլի-ի գոցուեցաւ	100 13/16
Օսմն. բացուեցաւ	7 13/16
» » գոցուեցաւ	8
Օսմն. փոխառութիւն 1865	10 7/8
» » 1869	9 5/8
» » 1871	66 1/2
» » 1872	18 1/4
» » 1873	8 1/2
Փոխառութիւն 1877	78 5/4
Պանք Օթոման	12 7/8
Ռուսական փոխառ. 73 (գ. կ.)	94 3/8
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)	62 1/2
» սառանձն. (բրիվիլէժիէ)	83 3/4
Տայրա Սանիէ	55 1/2
Տօմանիալ (փոխառ. Բօչիլը)	85 1/2
Հունգարական պարտաթուղթ 1877	102 1/4
Փոխանակութիւն Բարիզի վրայ	— —

Վիէննա, 23 Հոկտեմբեր ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	122 10
Օսմանեան երկաթուղի	21

Բարիզ, 23 Հոկտ. ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0 բաց	109 15
» » 3 0/0 բաց	78 20
Օսմանեան քօնսոլիտէ բացուեցաւ	
» » գոցու. (գ. կ.)	
» » 1865	54
» » 1869	47
» » 1873	42
Օսմանեան երկաթուղի	43 75
» Ռէժիի բաժնեթուղթ	516 25
Պանք Օթոման	572 50
Գրէտի Լիոնէ	538 73
» Ֆոնսիէ	1300
Բաժնետոմն Լիոնի (գուբ. կտր.)	1232 50
Սուէզի ջրանցք	1901 25
Ռուսական 5 0/0 1877ի	99 55
Իտալական Ռանթ	69 55
Եգիպտական միացեալ գոց	314 37 1/2
Սպանիական (արտաքին)	59 7/8
Բրիօրիթէ թիւրք	374 37 1/2
5 0/0 Հելլենական	358 75
Չէք Լոնտրայի վրայ	25 22

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Հոկտեմբեր 23 ժ. 10, վ. 30

Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0	109 15
Օսմանեան »	
Եգիպտական միացեալ	313

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33 ՐԴ ՏԱՐԻ | 1884 ՀՈԿՏԵՄԲԵՐ 13 | ԹԻՒ 3739

ՐԱՖՖԻ

ԵՒ

ՀԱՅ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆԸ

Ե.

Ի՞նչ ըրաւ գրական քննադատութիւնը Պ. Բաֆֆիի համար։ Ներելի էր մեզ ի ըկըզբան յուսալ թէ՝ Կովկասեան հայ տաղանդը, զարգացած գերմանական և ռուսական համալսարանաց մէջ, ունէր իւր տրամադրութեան ներքեւ բաղմադիմի միջոցներ գաղափար մը տալու մեզ այն գրական քննադատութեան որոյ պարտքն է պարզել գրքի մը ունեցած կոչումը և նորա աղդեցութիւնը ժողովրդեան մտաց և բարուց վրայ։ Դժբաղդաբար Կովկասեան Հայոց մէջ ի յայտ չեկաւ այն քննադատը զոր կը փափաքէինք տեսնել։ Կարելի՞ է երեւակայել որ Ռուսիոյ Հայոց մէջ քննադատը տակաւին այն վիճակին մէջ գտնուի որ կարծէ թէ իւր պաշտօնը « գիւղական վարժապետի մը նման միայն թաթպան բաշխել լինի աշակերտաց »։ — Արդարեւ ամենէն ընդարձակ քննադատութիւնը զոր տեսանք Պ. Բաֆֆիի գործոց մասին, ուրիշ բան չէր ներկայացներ մեզ՝ բայց եթէ ատելութեան շունչ մը։

Այո՛, եւրոպական գրադատութեան այս զարդացման միջոցին դեռ հայ գրադատը կը զբաղի յատկացուցչի և յատկացեալի սըխալներ որոնելով։ Աշխարհագրական չեմ գիտեր որպիսի անճշդութիւններ կ'ուզեն գտնել, և հաստատել թէ Բաֆֆիի այս ինչ գործին մէջ և ուրիշ հեղինակի մը այս ինչ գործին մէջ նմանութեան կէտեր կան. հետեւութի՞ւնը. ուրեմն Բաֆֆի քանգող մ'է։ Իսկ այն ամէն փիլիսոփայական եւ ուրիշ զանազան կարգի գաղափարները զոր հեղինակը կը ծաւալէ ժողովուրդին մէջ, նոքա անտես կը լինին։ Ինչ որ վիպասանութեան մը կեանքը կը յօրինէ, կամ նորա տկար կողմը կը համարուի, այդ ամէնը մոռացութեան կը տրուի։ Սիրտ մ'ունի վիպասանը, հոգի մը զոր կը ցոլացնէ իւր վիպասանութեանց մէջ, որուն ոսկեզօծ շրջանակը կը կազմեն բեղմնաւոր տաղանդի մը հրապոյրներն. եւ այդ սիրտը, այդ հոգին, ժողովուրդի սիրտն է, ժողովուրդի հոգին է, և քննադատը ո՞րպիսի մթնոլորտի մը մէջ կ'ապրի որ չ'ուզեր այդ ամէնը տեսնել։ Ընդհակառակն կ'ուզէ շատ և շատ պարզել այն կէտերն, որք զհեղինակն իսկ դուցէ կասկածելի ընծայեն, առանց իւր գիտութեան, յաչս բարձրագոյն իշխանութեան։

Բայց տակայն առ ի՞նչ օգուտ քննադատի մը հարուածներն երբ նոքա չեն յենած այնպիսի հիմանց վրայ, որք ինքնին արդէն խարխուլ լինին։ Կոթողի մը դէմ ամեն հարուած անզօր է։ Ժողովուրդը, ազգը կը լափէ այդ հատորներն որոց մէջ կը գտնէ իւր սրտին արձագանքն։ Իսկ թէ քննադատ մը կարենար պարզել այն առնչութիւնը, որ կը կայանայ ազգին և հեղինակի միջեւ, այն ատենն է որ քննադատը պաշտօն մը կատարած կը համարուի, հեղինակին աչ բաղուկը կը նկատուի, նորա գաղափարաց տարածման մեծ գործին է և ըստ այնմ իւր ընդունելութիւնն ալ մեծ կը լինի ժողովուրդի մէջ։

Ինչպէս ըսինք մեր առաջին յօդուածով, զանազան պարագայներ, անկախ մեր

կանքէն, հնարաւոր չեն ընծայեր մեզ տալ ըստ մեր փափագանաց ալէտք եղած տեղեկութիւնները Պ. Բաֆֆիի գործոց մասին, հետեւաբար մեր ուրիշ կարգի տեսութիւններն ալ ստիպեալ ենք զանց առնել։

Պ. Բաֆֆի, կորովի թէ՛ մտօք և թէ՛ մարմնով, կարող է տակաւին ընծայել մեզ բազմաթիւ պատուական հեղինակութիւններ, որոց մի մասն արդէն պատրաստ իւր մօտն ունի։ Խնդրեցի իրմէն մի գործ Աբէ-Եէլի համար, «ոչայն, ահա՛ քար գայթակղութեան բառը։ Երբ Խալֆոդէ յիշատակարանը, որուն մէկ մասը Մշակի մէջ տպուած և միւս մասը անտիպ էր տակաւին, Աբէ-Եէլի մէջ հրատարակելու արտօնութիւն խնդրեցինք, առաջարկելով ընդունիլ իւր պայմաններն, Պ. Բաֆֆի այնքան բարի եղաւ որ չուզեց առաջարկել ո և է պայման, որուն համար այս առթիւ մեր շնորհակալութիւններն վերստին կը կրկնենք։

Զ.

Մեր այս հակիրճ տեսութեան մէջ հայ վիպասանութեան մասին չուզեցինք խօսիլ զանազան վիպական գործոց վրայ, պի թերեւս առիթ ունենանք օր մը, երբ պարագայները ներեն, աւելի ընդարձակ ուսումնասիրութիւն մը ներկայացնել։ Ոմանք դիտողութիւն ըրին թէ՝ Աբովեանի Վէրքը չենք յիշատակած։ Սակայն այդ մեծ գործը աւելի ժողովրդական դիւցազներգութիւն մ՚է քան վիպասանութիւն մը, և միանգամայն մեր վերջի տասնեւհինգ տարիներու գրական շարժման շրջանակէն դուրս է։

Այժմ կը մնայ մեզ խորհիլ թէ ի՛նչ ապագայ կը պատրաստուի հայ վիպասանութեան։ Մեր կարծեօք գրական զանազան ճիւղերու մէջ վիպական ճիւղն է որ ամենէն աւելի գրաւական ունի զարգանալու։ Արդարեւ շատ դժուար է այսօր մեր մէջ հնչակել պատմութեան, փիլիսոփայութեան, և գիտութեանց զանազան ճիւղերն։ Այդ դժուարութիւնը ոչ միայն մեզ, այլ նաեւ օտար ազգերու համար իսկ գոյութիւն ունի։ Միայն ընթերցողաց բազմութիւնը չէ որ կը քաջալերէ Եւրոպացիներն և Ամերիկացիները նուիրել իրենք զիրենք այդ ճիւղերու հնչակման, այլ նաեւ զօրաւոր աջակցութիւններ, բազմառատ վարձատրութիւնք, պաշտօնական փոխարինութիւնք և պատիւք հնարաւոր կ՚ընծայեն այդ ճիւղերու զարգացումն։ Մեր արդի վիճակը չներեր այսպիսի շուայլութիւն, և տակաւին եկեղեցականաց կամ վանական միանձանց մենաշնորհն է նոյն իսկ մեր պատմութեան ուսումնասիրութիւնը, և այն ալ մեծ մասամբ հնագիտութեան տեսակէտով և ոչ թէ պատմական փիլիսոփայութեան։ Սակայն այժմ վանքերն ալ հետզհետէ կը դանդաղին հոգալ մեր այդ կարգի պէտքերն։ Վենետիկի Մխիթարեանք իրենց դպրոցներու կը նուիրեն իրենց ամենէն առոյգ ոյժերն. Վիէննայի Մխիթարեանք դրամական տագնապի մէջ չեն կարող ոչ ինչ ընել։ Առ այժմ մեծ յոյսեր չունինք էջմիածնէ, Երուսաղէմէ, Մուշէ։

Սակայն վիպասանութիւնը թէպէտ մատենագրութեան ամենէն հեշտին ճիւղը չէ, բայց հեշտութիւն պատճառող է։ Մեր վիպասանութիւնը բարեշրջման ենթակայ է, և երբ պատմական էր, այժմ կ՚սկսի իրեն ապարէզ ընտրել մեր ժամանակակից կեանքն։ Մայրան կամ Գաբրիան մի Ասոռ այդ բարեշրջման երախայրիքն են։ Եւ արդարեւ եթէ պատմական վիպասանութիւնը ըստ բաւականին իւր դերը կատարեց, արդի վիպասանութիւնը շատ առատ հունձք ունի իրեն համար։ Երիտասարդ տաղանդներն համարձակ կրնան թեւակոխել յայդ ասպարէզ, այն վստահութեամբ որ կենաց իրական պատկերներ ներկայացնելով կարող են մեր ընկերական բազմադիմի խնդրոց լուծումն ի հրապարակ հանել։ Մասիս և Աբէ-Եէլ իրենց աջակցութիւնը յօժարակամ պիտի նուիրեն այն ամեն երիտասարդներու որք մեր ընկերական կենաց ուսումնասիրութիւնը իրենց աշխատանաց առարկայ կ՚ընտրեն։

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՆ Յ'ԵՒՐՈՊԱ ԵՒ Յ'ԱՄԵՐԻԿԱ

—o—

Ա.

Եւրոպոյ և Ամերիկայի քաղաքական կուսակցութեանց մեծագոյն մասին ներքեւ հայի խնդիրը կայ, ըսուած էր Լրաբերոյ մը կեանքը վերնագրով յօդուածի մը մէջ, զոր Արեւելեան հրատարակեց անցեալ օր։ Որոշեցեր մեր մէջ ալ, և մանաւանդ այս միջոցիս, շատ կը յեղյեղուի կուսակցութիւն բառն, և ամեն անգամ որ նմանութիւն մ'ընելու պէտքն զգացուի, շատեր չեն վարանիր քաղաքակիրթ երկիրներու մեծ կուսակցութիւններն իբրեւ օրինակ մէջ բերել, կ'ուզենք համառօտ տեսութիւն մ'ընել, յորմէ երեւի թէ, ո՞յք են այն շարժառիթք որք կազմել կուտան և կ'ապրեցնեն քաղաքական կուսակցութիւնները. լոկ դաղափարնե՞ը, կամ վերացական վարդապետութիւնն՝ե՞ն են այս շարժառիթք, թէ նիւթական շահերն, երկրի մը կամ ժողովրդեան դասու մը նիւթական բարեկեցութեան խնդիրներն։ Այս հարցման գործնականապէս պատասխանելու համար, պիտի քննենք չորս մեծ երկիրներու, Ֆրանսայի, Գերմանիոյ, Անգլիոյ և Միացեալ Նահանգաց կուսակցութիւններն, ընթերցողաց թողով ասոնցմէ հետեւութիւն հանել եւրոպական ուրիշ երկիրներու համար, ուր քաղաքական կուսակցութիւնք յիշեալ չորս առաջնակարգ երկիրներէ միոյն կամ միւսին օրինակին հետեւող են արդէն։

ՖՐԱՆՍԱՅԻ կուսակցութիւնները կրնանք բաժնել երկու մեծ մասերու, Հանրապետականներու և Միապետականներու։ Այս ընդհանուր անուանց ներքեւ կան ուրիշ բաժանումներ, որք ճշմարիտ կուսակցութիւններ են։ Հանրապետականք են կա՛մ Զափուոր, կա՛մ Արմատական, և կա՛մ Ծայրայեղ։ Միապետականք են կա՛մ Պուրպոնեան, կա՛մ Օրլէանեան և կա՛մ Պոնապարդեան։

Ընդհանրապէս կուսակցութիւն մը կըրնայ բաժնուիլ երկու դլխաւոր մասերու, Լրիւէ և հեպեռոդ։ Վարիչներն են քաղաքագէտներն, որք բան դործ ըրած են կազմ և պատրաստ վիճակի մէջ պահել կուսակցութիւնն իբրեւ բանակ մը։ Հետեւողներն են ժողովուրդն, որ ո՛և իցէ հակիրճ տեսութեամբ մը որոշած է աւելի կամ նուազ կուրօրէն հետեւիլ այս կամ այն կուսակցութեան։ Արդ, մինչ վարիչներն ամեն բանէ աւելի հոգ կը տանին պահելու կամ շահելու դիրք մը որ կրնայ օր մը պաշտօն, պատիւ, և մի բան յոյժ շօշափելի առաւելութիւններ բերել իրենց, կամ որ արդէն իրենց տուած է զասոնք, ժողովուրդն աւելի այս քան թէ այն կուսակցութեան կը հպատակի՝ այն հաստատ համոզմամբ թէ իւր նիւթական բարեկեցութեան պայմաններն ապահովելու յարմարագոյն է այս կուսակցութեան քաղաքականութիւնը։ — Տեսութիւն մ'է այս, որ կը պատշաճի ամեն երկիրներու ալ. բայց մանաւանդ Ֆրանսայի մէջ, ուր կուսակցական ոգին միւս երեք մեծ երկիրներէն աւելի սաստիկ է, և աւելի բաղմազան ձեւերով ի հանդէս կուդայ, սոյն տեսութիւն շատ կը պատշաճի իրողութեանց։ Հետեւողներու շատութեան կողմը, կուսակցութիւններն այսօր սա կարգն ունին ի Ֆրանսա. Ամենէն աւելի զօրաւոր են Հանրապետականք. յետոյ կուգան, բայց շատ հեռուէն, Օրլէանեանք, և ամենէն վերջը կը մնան Պոնապարդեանք և Պուրպոնեանք։ Հանրապետականք ամենէն աւելի զօրաւոր են այսօր, բայց այնպէս չէին Նաբոլէոն Գ. Կայսեր անկման հետեւեալ օրն իսկ, երբ ընդհանուր յուսաբեկութեան վայրկենի մը մէջ ամենուն բերնէն Հանրապետութիւն անունը թռաւ։ Ո՛չ միայն այդ օրն, այլ նաև քանի մը տարիներ ետքն ալ, ընդ Նախագահութեամբ Մարէշալ Մագ-Մահոնի, Հանրապետականք դէռ անկարող էին վճռական յաղթանակ մը տանիլ, եթէ Միապետականք կարենային միանալ ընդդէմ հանրապետական դրութեան։ Իւր առաջին տարւոյ մէջ, Հանրապետութիւնն աղատեցաւ առաւելապէս իւր թշնամեաց բաժանումներուն շնորհիւ, քան իւր իսկ ներքին զօրութեամբ։ Պատմական իրողութիւն մ'է թէ, Ազգային ժողովոյն մէջ, Հանրապետութեան հրատարակումէն մի քանի տարիներ յետոյ, միայն Դէկ քուէի մեծամասնութեամբ

քուէարկեցաւ զՀանրապետութիւն վերջնապէս հաստատող Սահմանադրութիւնը։ Բայց այսօր այնպէս չէ։ Հանրապետական միութեան քով աննշան կոտորակ մ'են բոլոր միւս կուսակցութիւններն ի միասին առեալ։ Հանրապետականք զօրաւորագոյն են քան միւս ամեն կուսակցութիւններ. զի այսօր ամենէն աւելի ունին ժողովրդական դասէն հետեւողներ։ — Ի՞նչ է ասոր պատճառը։ Վերջին 8–10 տարիներո՞ւ մէջ էր միթէ որ Ֆրանսական ժողովուրդն սկսաւ համոզուիլ թէ՝ վերացական տեսութեամբ մը՝ հանրապետական դրութիւնը կառավարական դրութեանց լաւագոյնն է։ Բայց 1793ին և 1848ին ալ Ֆրանսացիք Հանրապետութիւն ունեցած էին, զոր չէին շարունակած։ Պէտքական հարուածները, որք կործանեցին այս Հանրապետութիւնները, միջադէպ մ'են միայն։ Եթէ ժողովրդեան սիրտն աւելի կամ նուազ հակած չլինէր պետական հարուածոց հեղինակներուն կողմն, այդ հարուածոց յաջողող դրութիւնք չէին կրնար տեւել բազում տարիներ։ Եթէ լոկ վարդապետական տեսութիւններ բաւ լինէին Ֆրանսական ժողովուրդն համոզելու թէ հանրապետական դրութիւնը լաւագոյն է, սկսած էր որ նախորդ Հանրապետութիւնք չկործանէին այնպիսի խղճալի կերպով. կամ Երրորդ Հանրապետութիւնն իւր առաջին օրէն իսկ զըտնէր այսչափ բաղմաթիւ կուսակիցներ. զի ո՞չ ապաքէն վարդապետութիւն մը ամեն ժամանակ հաւասարապէս ճշմարիտ է։ Բայց եթէ այսօր Ֆրանսական ժողովրդեան ստուարագոյն մասն հանրապետական կուսակցութեան կը հետեւի, լոկ գաղափարի կամ զգացումի խնդիր մը չէ այս. մանաւանդ թէ գաղափար և զգացում կարի անենչան տեղ մը կը բռնեն խնդրոյն մէջ։ Գըլխաւոր պատճառն այս է որ, ժողովուրդը տարուէ տարի փորձով կը տեսնէ թէ Հանրապետականք կրնան Ֆրանսան վարել ա՛յնպէս որ վաճառականութիւնն և արհեստները չվնասուին, այլ խաղաղապէս կարենան շարունակել իրենց ընթացք և զարգանան։ Ապահով վիճակի մէջ կը տեսնէ իւր նիւթական շահեր։ Իւր խնայութեանց պտուղն, որով կը յուսայ կարգել իւր աղջիկներ և գործ մը պատրաստել իւր որդւոց, կը տեսնէ որ անվտանգ տեղ մը կը գտնուի և տոկոս մը կը ստանայ պետական արժեթղթերէն, չնորհիւ կառավարութեան ստացած ընդհանուր վարկին, և տարուէ տարի ալ կ'աճի։ Նոյն ժողովուրդ զայս ապահովութիւն 20 տարի առաջ ալ ունէր Նաբոլէոն Գ. Կայսեր օրով, և յայնժամ կայսերական կուսակցութեան կը հետեւէր նոյնչափ հանրությամբ, կամ նոյնչափ կուրօրէն։ Նոյն միջին դասու քաղաքացին, կամ գիւղացի երկրագործն էր, կամ անոր հայրն, որ, 20 տարի ևս առաջ, Լուի Ֆիլիպի օրով, թիկունք և ապնածուած եղած էր Օրլէանեան կուսակցութեան։ Ըսել է թէ, Ֆրանսացւոց ամենամեծ մասը դաղափարի մը համար չէ որ կը հետեւի այս քան թէ այն կուսակցութեան, այլ յարեալ է այն կուսակցութեան որ ամենէն աւելի ձեռնհասութիւն ցոյց կուտայ ժողովրդեան բարեկեցութեան պայմաններն ապահովելու, և կը դադրի կուսակցութեան մը հետեւելէ՝ երբ կը տեսնէ թէ աղէտէ յաղէտ միայն կ'առաջնորդէ զինք։

Այն իրողութիւն թէ Ֆրանսայի մէջ կառավարական դրութիւնք փոխուած են գըլխաւորապէս Բարիզ քաղաքի յեղափոխութեանց միջոցաւ, հերքում մը չէ մեր այս տեսութիւն. զի Բարիզի Յեղափոխականք գործի կը սկսին ամեն անգամ որ կը տեսնեն թէ օրուան կառավարութեան վարկն արդէն կոտրած է ժողովրդեան քով, և ազգային դժբախտութեան մը, կամ դըժբախտութեանց ստոյգ հաւանականութեան մը առջեւ միայն կը յաջողին իրենց ետեւէ ձգել ժողովուրդը։ Սըտանի առումէն յետոյ, կայսերական դրութեան դէմ ժողովրդային զայրոյթը միայն մայրաքաղաքին յատուկ չէր։ — 1848 ի կարճատեւ Հանրապետութիւնն ալ չէր կրցած զօրեղապէս հաստատուիլ երկրին մէջ, և Խորհրդարանին ներքին դժտութիւնք, որք հընարաւոր գործեցին 1851 դեկտ. 2 ի պետական հարուածը, չէին կրնար տեղի ունենալ եթէ երկիրն ընդհանրապէս համոզուած լինէր թէ հանրապետական դրութեամբ ապահովեալ էին ժողովրդեան շահերն, և 1848 ի Հանրապետութեան վրայ փորձով ստացած լինէր նոյն վստահութիւն զոր այսօր կը ցուցնէ 1884 ի Հանրապետութեան։ — Լուի Ֆիլիպի թագաւորութիւնն ալ, 18 տարի տեւելէ յետոյ, արդարեւ բա-

րիզեան Յեղափոխութեամբ մը ինկաւ, բայց երբ երկրին առջեւ կորուսած էր ամեն վարկ, մի կողմէ անկարողութիւն ցուցնելով երկրին նիւթական շահերը պաշտպանելու, և միւս կողմէ յարձակելով այն էական ազատութեանց վրայ որք ամեն սահմանադրական երկրի մէջ ժողովրդեան դլխաւոր դէնքերն են պաշտպանելու իւր նիւթական շահեր։ Մամլոյ ազատութիւն, խօսելու ազատութիւն և դումարման ազատութիւն այնչափ չէին դնահատուեր սահմանադրական երկիրներու մէջ, և ժողովուրդն ի հարկին ոտք չէր ելներ զանոնք պաշտպանելու համար, եթէ այդ ազատութիւնք գործնական օգուտ մը չունենային, և չծառայէին զարգացնելու և դուրսէն կամ ներսէն սպառնացող վտանգաց դէմ պաշտպանելու ժողովրդեան նիւթական շահերն իսկ։

Ուստի, առանց բազմացնելու օրինակները, կ'ըսենք թէ այս մէջ բերուած նկատողութիւնք կ'արդարացնեն ա՛յն եզրակացութիւն թէ, Ֆրանսայի մէջ կուսակցութիւնք կանգուն կը մնան ցորչափ կը պաշտպանեն, կ'ապահովեն և կը զարգացնեն ժողովրդեան նիւթական շահերն, այսինքն՝ հացի խնդիրն։ Եւ որ աւելին է, ժողովուրդը շատ բարոյական թերութիւններ կը ներէ կուսակցութեան մը որ սակայն կը յաջողի ապահովել այս հացի խնդիրն, — ինչպէս տեսնուեցաւ դարուս մէջ իսկ, այն կայսերական և արքայական կառավարութեանց օրով, որք ժողովրդեան նիւթական յաջողութեան պիտոյից ամեն գոհացուցիչ տալով հանդերձ, չէին այնչափ ազատամիտ որչափ հանրապետական կառավարութիւններն որք անոնց յաջորդեցին։

Հետեւապէս, չոր գաղափարը չէ՛ որ կ'ապրեցնէ կուսակցութիւններն։ Առանց իւր ետեւ ժողովուրդ մ'ունենալու, կուսակցութիւն մը կը նմանի սպայակոյտի մը որ բանակ չունի, և ժողովուրդ մը կ'ապրի ո՛չ թէ չոր գաղափարով, այլ նիւթական շահերով։ Արդէն, խմաստասիրական տեսակէտով մը նայելով խնդրոյն վրայ, գաղափարներն այնչափ աւելի ընդունելութիւն կը գտնեն և կը տարածուին ժողովրդեան մէջ, որչափ կը նպաստեն, կամ կը կարծուի թէ կը նպաստեն, զարգացնելու ժողովրդեան նիւթական շահերն, ապահովելով անոր բարեկեցութեան պայմանները։ Ֆրանսական մեծ Յեղափոխութիւնն իսկ տեղի չէր ունենար, եթէ ժողովուրդն այն արդար համոզումն ստացած չլինէր թէ, կործանելով Պուրբոնեան ապականեալ դրութիւնն իւր ամենայն զեղծումներով ու կեղեքումներով, նիւթական լաւագոյն վիճակի մը պիտի արժանանար։

Եթէ այսպէս է ժողովրդեան համար, միթէ տարբե՞ր է կուսակցութեան մը պետերուն համար։ Եթէ ժողովուրդը նիւթական շահերով կը մղուի բաժնուելու կուսակցութիւններու, միթէ կուսակցութեանց պետերը մէկ մէկ վերացական գաղափարի առաքեալնե՞րն են անպատճառ, աշխարհային խոնարհագոյն նկատումներէն բոլորովին վեր։ Բաղնաց ֆոթելին համար դուցէ քիչ մը սաստիկ ցնցում մը լինի սա ճշմարտութիւն թէ, անոնք ալ, կուսակցութեանց պետերն ալ, հացով կ'ապրին, և մահկանացուներ են իրենց աւելի կամ նուազ կոյր հետեւողաց նման։ Տրիբունին ետեւ կայ քաղաքագէտը (Բոլիտիկոսը), քաղաքագէտին ետեւ սրամիտ փաստաբանը, խմբագիրը կամ երկրաչափն, (1) և սոնց ետեւ ալ կայ գործնական մարդն, ընկերութեան մէջ փայլուն և հանդիստ դիրք մը բռնելու և իւր կենաց մնացեալ մասը բաւական կլոր ռանդով (եկամուտով) մը խաղաղապէս անցուցնելու հետամուտ խելանի Ֆրանսացին։ Քուէներ վաստկելու, մեծամասնութիւն շահելու բարոյական գեղեցկութեանց ետեւ կան օր մը պաշտօնի անցնելու նիւթական անդիմադրելի հրապոյրներն ալ։ Լրագրութեան մէջ կամ բեմերու վրայ փայլող քաղաքագիտաց մեծագոյն մասը պարզապէս կ'աշխատի ձեռք բերել բարոյական և քաղաքական դիրք մը, զոր շատ միջոցներ ունի՝ իբրեւ պատրաստ դրամագլուխ մը՝ փոխարինելու այս աշխարհի նիւթական բարեաց հետ։ Այս ամենայն յոյժ բնական է։ Առանց այս նիւթական առաւելութեանց, ո՛չ ոք պիտի ուզէր կուսակցութեան մը համար աշխատելու յոգնութիւններն և սրտնեղութիւններն ստանձնել։ Անձնուիրութեան գաղափարը չի մեր-

(1) Ֆրանսայի նախարարաց և քաղաքագիտաց ամենամեծ մասն այս երեք արուեստից միոյն հետեւող եղած են ի սկզբան։

ժեր մեծաւոր կամ հեռաւոր վարձատրութեան մը ակնկալութիւնը։

Այժմ, ինչ որ մեզ կը մնայ ըսել միւս կուսակցութեանց վրայ, կը հաստատէ նոյն տեսութիւնը թէ, կուսակցութիւնք կանգուն կը մնան ցորչափ իրենց նպատակ ու գործողութեան միջոցներ կը չօշափեն ժողովրդեան ապրուստի խնդիրն, և թէ ժողովրդեան մեծագոյն մասը շուտով կը լքանէ կուսակցութիւն մը, որ այլ եւս աղդեցութիւն չունի այս էական խնդրոյ վրայ։ Օրլէանեանք, Պոնապարդեանք և Պուրպոնեանք ամենքն ալ այդ դրից մէջ են այժմ. բայց աստիճաններ կան զանազանելու։ Օրլէանեանք միւս երկու կուսակցութիւններէն լաւագոյն դիրք մ'ունին ժողովրդեան քով, և դրէթէ յայտնի կ'երեւի որ եթէ օր մը Հանրապետութիւնը, մեծամեծ սխալներ գործելով, կործանի և ուրիշ դրութեան մը տեղի տալ պարտաւորի, Օրլէանեան թագաւորութիւնն է որ պիտի բռնէ անոր տեղն։ Ասոր մեծագոյն պատճառը սա է թէ, Օրլէանեան կուսակցութիւնը դարուս մէջ Պոնապարդեան կուսակցութեան չափ սխալներ չգործեց, և եթէ իւր իշխանութեան վերջերը թերութիւններ ունեցաւ, այս թերութիւնք շատ հեռի էին կայսերական կուսակցութեան սխալներուն չափ աղետաբեր լինելէ երկրին։ Նաեւ Օրլէանեան կուսակցութիւնը, դարուս մէջ, Պուրպոնեան կուսակցութենէն աւելի բարեկամ եղաւ ժողովրդեան և գործեց առաւել հասկցողութեամբ ժողովրդեան պիտոյից։ Այս պարագայք դեռ չեն մոռցուած, զի ժամանակակից պատմութեան մասը կը կազմեն, և Ֆրանսացւոց ստուար մեծամասնութիւնն որ տակաւին կը յիշէ զանոնք, եթէ օր մը փորձուի դրութիւն փոխել, որ նորաձեւութիւն մը փոխելու չափ բնական կ'երեւի Ֆրանսայի մէջ, իւր կենսական շահեր հաւանօրէն առաւել ապահով պիտի տեսնէ Օրլէանեան, քան թէ Կայսերական կամ Պուրպոնեան դրութեան մէջ։ Բարիզի կոմսը, թոռ Լուի Ֆիլիպ թագաւորի, կրնայ սահմանադրական թագաւոր մը լինել. կամ եթէ իւր օրով Հանրապետութիւնը չգործէ մին այն սխալներէ որք աղետաբեր են ամենէն զօրաւոր կուսակցութեանց իսկ, իւր նորածին որդի կրնայ ապրիլ նոյն յուսով։ Առանց նշանակութեան չէր ուրեմն որ Օրլէանեան թագին այս նոր ժառանգի ծնունդը ծանուցուեցաւ բոլոր կառավարութեանց Պետերուն, և Վեհ. Սուլթանն եւս առիթ ունեցաւ հեռագրով շնորհաւորելու Բարիզի կոմսը։

Պուրպոնեանց նկատմամբ Ֆրանսացւոց ստուար մեծամասնութեան դդացումն ապացոյց մ'եւս է թէ, ո՛րչափ անզօր կը մնան այն կուսակցութիւնք որ լոկ վերացական սոսուլ դաղափարի մը յենած են, և պաշտօն չունին յուղելու ժողովրդեան ամենէն կենսական շահերն։ Յայտնի է թէ Պուրպոնեանք և Օրլէանեանք Ֆրանսայի միեւնոյն թագաւորական դերդաստանին երկու ճիւղերը կը կազմեն, առաջինն՝ երէց, երկրորդը՝ կրտսեր ճիւղն։ Երէց ճիւղին կը վերաբերէին Լուի ԺԹ. (եղբայր Լուի ԺԶ.ի որ մեծ Յեղափոխութեան միջոցին, 1793ին, դլխատեցաւ,) որ դարուս մէջ, Նաբոլէոն Առաջնոյ անկման յաջորդող Աբէյական Վերահասպարութեան միջոցին, թագաւորեց 1815էն ց1824, և Շարլ Ժ. (եղբայր Լուի ԺԹ.ի) որ թագաւորեց 1824էն ց1830, յորժամ դահակալուկ եղաւ և աքսորեցաւ։ Օրլէանեան ճիւղին կը պատկանէր Լուի Ֆիլիպ, որ թագաւորեց 1830էն ց1848, յորժամ դահակալուկ եղաւ, և մեռաւ աքսորման մէջ։—

Բայց արքայական նոյն դերդաստանի այս երկու ճիւղերուն միջեւ սկզբանց խորին զանազանութիւն կայ։ Պուրպոնեանք չեն ճանչնար մեծ Յեղափոխութիւնը, զոր կը մերժեն իւր բոլոր հետեւանքներով ու սկզբունքներով։ Անոնց երդն է վերականդնել հին Պուրպոնեան թագաւորութիւնը, Լուի Զորեքասանեերորդի թագաւորութիւնը, 1789էն առջի դրութիւնը։ Բաւին բուն իմաստով սահմանադրական չեն։ Իբրեւ քաղաքական Աւետարան կը նկատեն իրենց հանդուցեալ Պետի, Շանպոռի դքսին (թոռ Շարլ Ժ.ի) դրուածներն, որ Խորհրդարանը կ'ընդունէր իբրեւ խորհրդատու մարմին միայն, և չէր ճանչնար Եռադոյն Դրօշն, խորհրդանշան Նոր Ֆրանսայի, որ ծնունդ կ'առնու 1789ին, այդ յարած կը մնար վաղեմի թագաւորութեան Սպիտակ Դրօշին։— Օրլէանեանք, ընդհակառակն, կ'ընդունին Յեղափոխութիւնն իւր ամեն հետեւութեամբք, կը ճանչնան Եռադոյն Դրօշն, և իրենց իդէալ դրած են սահմանադրական

թագաւորութիւնն Լուի Ֆիլիբի, զերծ իւր վերջին ժամանակաց վարանումներէն ու նը-ւաղումներէն։

Արդ, մեծագոյն մասն Արքայականաց՝ Օրլէանեան է այժմ, և ոչ-արքայական կուսակցութիւններն եւս առաւել հակամէտ են Օրլէանեան քան Պուրբոնեան դրութեան հանակրելու։ Հանրապետականաց գլուխներն առաւել կը վախնան Օրլէանեան քան Պուրբոնեան կուսակցութենէն։ Ժողովուրդը կ'ատէ Սպիտակ Դրօշն, հոմանիշ՝ արքայական քմահաճութեան, ազնուապետական եւ աւատական դրութեան, տասանորդներու, տարապարհակ աշխատութեանց, կաթոլիկ կղերի գերիշխանութեան, տընտեսական և ելմոական յոռի սկզբանց, որք կատեցուցած էին ամեն բարդաւառումն։ Պուրբոնեանց գաղափարներն ո՛չ բարոյական, ո՛չ ալ նիւթական վերածնութիւն մը չեն խոստանար Ֆրանսայի, և ընդհակառակը կը յիշեցնեն երկրին ամենէն թշուառ ժամանակները։ Ֆրանսական բարքերու և դէպքերու մասցի դիտող մը, Պ. Օ.Պլոմիճ, գրած է տեղ մը թէ, գիւղացիք կ'ատեն Պուրբոնեան դրութիւնն, յիշելով տրոց ծանրութիւնն և վանդան կեղեքումներն որոց ներքեւ իրենց հարք ճնշուած էին անցեալ դարու թագաւորութեան օրով։

Ի վերջոյ, հանրապետական կուսակցութեան այլ և այլ ստորաբաժանմանց այժմու վիճակն եւս կը ցուցնէ թէ ամենէն աւելի ուշադրութիւն կը դրաւեն և հետեւողներ կը ստանան ա՛յն խմբակը որ ամենէն աւելի կոչում կ'ընեն ժողովրդեան կենսական շահերուն, և մանաւանդ ապրուստի խընդրոյն վրայ ազդեցութիւն ունենալու յարմար քաղաքականութիւն մը կը բռնեն։ Զափաւոր Հանրապետականք այսօր իշխանութեան վրայ են։ Այս Հանրապետականք առաւելապէս կը պատկանին Կամպէդդայի կուսակցութեան, որ Թիէրի դծած սահմաններէն շատ անդին անցած է, բայց բաղդատմամբ միւս ստորաբաժանմանց՝ չափաւոր կը համարուի այսօր, և Օքորդէ-Նէոդ անուամբ ծանօթ է։ Բայց արմատական (Ռատիքալ) եւ ծայրայեղ (Էքսդրէմ Կաշ) խմբակներն ալ ունին քաղաքական մեծ կարեւորութիւն, և Պ. Բլէմանսօ, մին սոցա Պեսերէն, կը համարուի հաւանական Պետ ապագայ Նախարարութեան մը։ Այս ծայրայեղ խմբակներ այն օրէն ի վեր սկսան գտնել բազմաթիւ համախոհներ և ստացան նոր կարեւորութիւն մը, երբ յայտնապէս ջատագովեցին ընկերվարական գաղափարներ, և գործաւոր դասուց պաշտպան հանդիսացան, յուղելով ամենէն հրատապ խնդիրն, հացի խնդիրը։ Պ. Բլէմանսոյի պահանջմամբն էր որ կազմուեցաւ 44 ից Յանձնաժողովն, որ զանազան արհեստից և գործաւոր դասուց այժմեան նիւթական տագնապը կը քննէ թէ՛ Բարիզի և թէ՛ արհեստական ուրիշ կեդրոններու մէջ, և դարմաններ կը խորհի։ Ծայրայեղ խմբակներու Պետերը շատ ժողովրդական են, զի պաշտպան կը հանդիսանան այնպիսի շահերու զորս ժողովրդեան ամենէն ստուարաթիւ դասերն ամենէն աւելի դիւրաւ կ'ընմբռնեն։

Բ. Ք.

ՁԻՆԱՑԻՔ

ՆԿԱՐԱԳՐԵԱԼ ՅԻՆՔԵԱՆՑ

Ի ՁԷՆԷ-ՔԻ-ԹՈՆԿ ՀՆԴԱՊԷՍ ՂԷՆՈՍՈՐԱԿԱՆ ԿՅՈՐԴԷ ՁԷՆՈՍՊԱՆԻ Է ՓՈՔԻՂ

Գ.

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն Տես Թիւ 3736)

Ձինաստանի մէջ նորանշան երեւոյթներ կը համարուին ծեր ամուրին և պառաւ աղջիկը։

Դիտմամբ կ'սկսիմ այս նիւթն ընդ պաշտպանութեամբ սոյն դիտողութեան. վասն զի աւելի դիւրին կը լինի ինձ յոյժ զարմանալի բաներ ըսել՝ առանց մեծ զարմանք գրգռելու։

Ծեր ամուրին և պառաւ աղջիկն էապէս եւրոպական արտադրութիւնք են, և այս կերով կեանք մը բացարձակապէս հակառակ է մեր բարուց։

Եւրոպիոյ մէջ կ'ըսեն թէ ո՛վ որ ծառայելու կարող է, զօրական է։ Մեր մէջ այս բանաձեւ կրնայ նոյն մնալ. բաւական է միայն ամուսնացեալ բառը դնել զօրական բառին տեղ։

Ամուրիութիւնն, յոյժ լրջաբար, մոլութիւն կը համարուի մեր մէջ։ Զքմեղացնելու համար զօրաւոր պատճառներ պէտք են։ Իսկ Եւրոպիոյ մէջ, ընդհակառակն, ամուսնութիւնը չքմեղացնելու պատճառներ պէտք են։ Այս ձեւ չափազանց է թերեւս, բայց վարիզական է, և երբ Զինաստանի մէջ ամուսնութեան խօսք լինի, վարիզական ամուսնութեան հակոտնեայն պէտք է հանկնալ։ Այս պատճառաւ, հետեւեալ մանրամասնութիւնք հետաքրքրաշարժ են հարկաւ։

Զինացիք յոյժ կանուխ կ'ամուսնանան, յաճախ քսան տարու չեղած։ Հազուադիւտ չեն տասներեւվեցամեայ պատանիք, որք տասն և չորս տարեկան աղջիկ կ'առնուն, այնպէս որ երսուն տարու մամիկներ շատ կը գտնուին։ Հարկ չկայ կլիմաբանական պատճառներ փնտռելու մեր բարուց այս տրամադրութեանց մէջ։ Մեր ընտանեկան կազմակերպութեան և ծնողապաշտութեան հետեւանքն են։ Զինաստանի թէ՛ հիւսիսակողմն և թէ՛ հարաւակողմն, այսինքն այնպիսի աշխարհայ մէջ ուր արեւադարձական ջերմութիւն կամ սիպերական ցուրտ կը տիրէ, այս բարքն նոյն են. ամեն տեղ թարմ հասակի մէջ կ'ամուսնանան։

Ծնողաց առաջին մտահոգութիւնն է իրենց որդւոյ ամուսնութիւնն, երբոր պատանեկութեան հասնին։ Մինչեւ իսկ այդ հասակէն առաջ ծնողք կը կատարեն իրենց ընտրութիւնն։ Արդէն խնայուցած են բարեկամաց թէ իրենց որդին անոնց աղջկան հետ ամուսնացնելու դիտաւորութիւն ունին. և կանխաւ կ'որոշեն իրացնել իրենց դիտաւորութիւնն՝ երբոր ժամանակը գայ։ Շատ անգամ հարսին ընտրութիւնը նոյն իսկ ընտանեաց շրջանակին մէջ կը կատարի։ Վերջապէս բարեկամաց բարեկամներ կան, որք ամուսնութիւններ կնքել տալու կ'ըզբաղին, անչահախնդիր միջնորդներ... և շատ անգամ կը յաջողին։ Վասն զի մեր մէջ ալ, ինչպէս ուրիշ շատ տեղեր, ամուսնութիւնը բաղդ մ'է, և ամուսինք ամուսնալէ յետոյ միայն կրնան ճանչնալ զիրար։

Յաւաջուց տեսակցիլ և դարպաս ընելն անծանօթ պարտականութիւն մ'է, և մեր բարուց անյարմար։ Եւրոպիոյ մէջ, ամուսնութենէն առաջ, քանի մը շաբաթ կը շնորհեն իրարու, որպէս զի իրար սիրել սովրին։ Տեսակ մը կայան կամ դադար է մեծ օրէն առաջ, և այդ ժամանակամիջոցի մէջ կոչունքներ ու ճաշեր կը տրուին միմիանց։ Սքսրալի կեանք մ'է այս, որ ամուսնութեան իբր նախադուռ կը ծառայէ, և որոյ յիշատակներն օր քան զօր աւելի կը քաղցրանան քանի որ ամուսնութեան տարիներն աւելանան։ Յայտնի է թէ ոչ ոք կ'ուզէ ստանձնել առաջարկեալ միութեան պատասխանատուութիւնը։ Կ'ըսեն խօսքեցեալներուն. «Ձանայէք ճանչել զիրար. երկու ամիս ունիք ձեր առաջ. այնուհետեւ այո՛ կամ ո՛չ պիտի ըսէք։» Կը ճանչէ՞ն զիրար կամ մանաւանդ կրնա՞ն ճանչել։ Անշուշտ ոչ։ Ես կ'եզրակացնեմ թէ աւելի լաւ է որ ծնողք լինին պատասխանատու գործակատարք ամուսնութեան, և թէ տղայք անոնց ընտրութեամբ միայն ամուսնանան։

Լաւ եմ որ կ'ըսեն. «Ամուսնութեան մէջ ամենէն երջանիկ ժամանակն ամուսնութենէն առաջ անցած ժամանակամիջոցն է»։ Փարիզցի մ'այնպէս կը կարծէ թէ ամուսնացեալ մարդ մը միայն կրնայ ըրած լինիլ զայս յայտարարութիւն. բայց պէտք է խոստովանիլ թէ այս բարքերն ալ մերիններուն չափ հետաքրքրաշարժ են։

Ամուսնութիւնք սկզբամբ կը կատարուին միեւնոյն ընկերական վիճակն ունեցող ընտանեաց միջեւ։ Կան արդարեւ տարօրինակ ամուսնութիւնք, բայց բացառութիւն են։

Երբոր ընտրութիւնն որոշուի, այսինքն երբոր աղջիկը նշանակուի, մանչուն ծնողքը պաշտօնապէս կ'առաջարկեն աղջկան ծնողաց։ Այս առաջարկին ետեւէն կուգայ նշանադրութեան արարողութիւնն։

Այս առթիւ ծնողք կը փոխանակեն ամուսնութեան պայմանագիրն՝ ստորագրեալ ընտանեաց գլուխներէն և ծնողներէն։ Մեր մէջ ընտանեաց գլուխները կը կատարեն քաղաքային վիճակի պաշտօնէից և նօտարաց պաշտօնն։ Յետոյ պատանին՝ ընտանեաց կարողութեան համեմատ՝ ոսկիէ կամ արծաթէ երկու ապարանջան կը զրկէ հարսնացուին՝ իբրեւ ընծայ նշանադրութեան։ Այս սովորութիւնք ճշդիւ նոյն են Եւրոպիոյ մէջ ալ. բայց Զինաստանի մէջ առանց հարսնացուին տեսնելուն կը կատարուին։ Ապարանջանները կարմիր դերձանով մը կը կապ-

ուին, որ ամուսնական կապի խորհրդանիշն է։

Հարսանեկան ընծայն յետոյ կը տրուի, և մեծահանդէս արարողութեանց առիթ է։

Պատանին քանի մը տասնեակ զարդարուն կողմնակներ կը ղրկէ իւր հարսնացուին, լի մետաքսով, բամբակով, ասղնեգործութեամբ, ծաղկօք, միով բանիւ, հարսնացուին արդուզարդին վերաբերեալ նիւթերով։ Այս ընծայից հետ, որք յոյժ ծանրագին կրնան լինիլ, ազնիւ համադամներ կը ղրկուին հարսնացուին ընտանեաց, մասնաւորապէս պարագային յարմար քաքարներ և կարկանդակներ, զորս հարսնացուին ընտանիքն իւր ամեն բարեկամաց կը բաշխէ՝ պաշտօնապէս ծանուցանելով իւր աղջկան ամուսնութիւնն։ Հարսնացուն ալ իւր կողմէ, փեսացուին ընծայներն ընդունելէ յետոյ, ամբողջ զգեստ մը կամ անոր աստիճանին համազգեստը կը ղրկէ իւր ապագայ ամուսնոյն, որ հարսնիքին օրը կը հագնի։ Երկու ընտանեաց իւրաքանչիւրը մեծ կոշունք մը կուտայ նշանադրութեան օրն իւր ազգականաց և բարեկամաց։

Հարսնիքը պարտի կատարիլ միշտ այն տարուոյն մէջ, յորում հարսանեկան ընծայն կը ղրկուի։ Հարսնիքին նախորդ օրն, հարսին ծնողքը փեսային կը ղրկեն իւր կնոջ ամբողջ օժիտն, այն է արդուզարդն, արծաթեղէնները, կահերը, կտաւեղէնները, միով բանիւ բոլոր տնական պիտոյքն։ Այս զանազան նիւթոց յուզարկումը մեծ հանդիսիւ կը կատարուի միշտ։

Նոյն աւուր երեկոյին, ժամ եօթնին, փեսային ընտանիքը դահաւորակ մը կը ղրկէ հարսին, ասղնեգործեալ կարմիր բեհեղով պճնազարդ։ Դահաւորակին առջեւէն կ'երթան խումբ մը նուագածուք, լապտերներ կամ ջահեր կրող սպասաւորներ։ Եթէ ընտանիքը պաշտօնական աստիճան ունի, կարմիր հովանեակ մ'և կանանչ հրարդել մը կը տարուի, (որք պաշտօնական նշաններ են), յետոյ պախտակներ, որոց վրայ նոյն ընտանեաց քանի մը սերունդներէ ի վեր ըստացած բոլոր տիտղոսներն արձանագրեալ են։ Նոյն երեկոյին հարսին ընտանիքը մեծ ճաշ մը կուտայ, որ հրաւէր կը կոչուի, և դահաւորակն ի ցոյց կը դրուի դահլիճին մէջ, ի տես հրաւիրելոց։ Ճաշին ժամանակ, փեսային կողմէ ղրկուած նուագածուք ուրախական երգեր կը նուագեն։ Փեսային ընտանիքն ալ նմանապէս հրաւէրի մեծ ճաշ մը կուտայ և հարսին օժիտը կազմող նիւթերն ի տես հրաւիրելոց կը դրուին։

Հարսանեաց օրուան առաւօտուն, փեսային ազգականաց կամ բարեկամաց մէջէն ընտրեալ չորս անձինք հարսին տունը կ'երթան և իւր նշանածին տունը կը հրաւիրեն զայն։ Հարսն ալ իւր դահաւորակը նստելով, իւր կամ փեսին ընտանեաց աստիճանին համեմատ՝ չորս կամ ութ մարդէ վերցուած կը տարուի։ Հարսին դահաւորակին առջեւէն կ'երթան չորս հրաւիրակաց դահաւորակներն, և այսպէս կազմուած հանդէսը փեսային բնակած տունը կ'երթայ։

Հոն հասնիլն ուրախական փողերով և հրաճաղակաց սանդերու պայթմամբ կ'աւետուի։ Անմիջապէս յետոյ հարսին դահաւորակը փեսային տան դահլիճը կը հանուի, ուր շարուած կը կենան ընտանեաց անդամք, բարեկամք, պատուոյ տիկնայք և երիտասարդք։ Վերջիններէն մին, որ մեծաղեայ հայելի մը կը կրէ կուրծին վրայ, կը ներկայանայ դահաւորակին առջեւ, որոյ վարագոյրը դեռ գոց է, և երեք անգամ կ'ողջունէ։ Յետոյ պատուոյ տիկնանց մին, վարագոյրը կէս մը բանալով կը հրաւիրէ հարսն (որոյ երեսը քօղով ծածկեալ է դեռ) որպէս զի վար իջնէ և իւր սենեակն երթայ, ուր փեսայն զինքը կ'սպասէ հանդիսական կերպարանքով։ Այս միջոցիս է որ երկու ամուսինք առաջին անգամ զիրար կը տեսնեն։ Այս տեսակցութենէ զկնի, դահլիճը կը տարուին երկու անձանց առաջնորդութեամբ, որք շատուց ի վեր ամուսնացած և արու զաւակներ ծնած պէտք է լինին։ Սոքա ամուսնութեան երիցագոյններն են, և «երջանիկ լծակիցք» կը կոչուին։

Դահլիճին մէջ տեղը սեղան մը կայ, որոյ վրայ բուրանոց մը, պատուղներ և գինի դրուած են։ Ըստ մեր մտաց, այս սեղան ի տես երկնից դրուած է։ Փեսայն և հարսն երկրպագութիւն կ'ընեն յայնժամ սեղանին առջեւ՝ գոհութիւն մատուցանելու համար զերագոյն էին՝ որ ստեղծեց զիրենք, Երկրին՝ որ սնոյց զիրենք, Կայսեր՝ որ պաշտպանեց զիրենք, և Ծնողաց՝ որ մեծցուցին զիրենք։ Ապա փեսայն իւր ընտան-

եաց անդամներուն և իւր բարեկամաց կը ներկայէ զիւր կին։

Սոյն արարողութեան սկիզբէն մինչեւ վերջն, ինչպէս նաեւ յաջորդող ճաշին ժամանակ, նուագածութիւնք կը շարունակեն անընդհատ։

Ընթերցողք կը նշմարեն պարզութիւնն այս արարողութեանց, որք ո՛չ կրօնական են, ո՛չ քաղաքային։ Քահանայ կամ քաղաքային պաշտօնատար ներկայ չգտնուիր, ո՛չ նուիրագործում կայ, ո՛չ պաշտօնական պայմանագրութիւն։ Ամուսնութեան միակ վկայներն են Աստուած, ընտանիք և բարեկամք։ Իրիկունը, ճաշէն յետոյ, տան դրուները բաց կը կենան, և ամեն դրացիք, մինչեւ իսկ անցորդք, իրաւունք ունին ներս մտնելու և հարսը տեսնելու, որ ոտքի վրայ կանգուն կը կենայ դահլիճին մէջ, սեղանով մը միայն բաժնուած, որոյ վրայ երկու վառած մոմ դրուած են։

Հարսանեաց հետեւեալ օրը՝ հարսը կ'առնու իւր ամուսինն և իւր ընտանեաց տունը կը տանի, ուր նոյն արարողութիւնք կը կատարին։

Ահա ասոնք են, բովանդակ տեսութեամբ, ամուսնութեան սովորոյթք, որք մանրամասնութեանց շքեղութեամբ միայն կը տարբերին հարուստ ընտանեաց մէջ, և կրնայ ոք դիւրաւ հասկնալ ինչ որ կարելի է իրացնել այսպիսի ծրագրով մը։ Եթէ արեւմտեան բարքերն հանդէսներու սովորութիւնը շնորհէին Եւրոպացւոց, ամուսնական արարողութիւններն ալ՝ յուղարկաւորութեանց չափ մեծավայելուչ կը լինէին։

Բայց բոլորովին տարբեր է արարողական կարգերն արեւմտեայց բարքերուն մէջ անցած սովորութիւն մը լինելով, կրցածնուն չափ ջնջել կը ջանան, և այժմ Եւրոպիոյ գիւղերուն մէջ միայն ամուսնութիւնք հարսնիք են։ Կը պարեն, կ'երգեն, ուրախութեան տօն կը կատարեն։ Բարձր դասուց մէջ կատարուած ամուսնութիւնք աշխարհի ամենէն նուազ ուրախական բաներն են։ Քաղաքային ամուսնութիւն տօնելու չեն երթար։ իսկ անոնք որ եկեղեցւոյ նուիրագործումը կ'ընդունին, եկեղեցիէն մեկնիլ կը փութան, և տուն վերադառնալուն պէս, հագուստներն կը փոխեն և երկաթուղին կը դիմեն։ Աստուդիս աւելի լաւ կ'ընեն՝ եթէ թաղապետը կամ քահանայն շոգեկառքը բերել տալով՝ կատարմանին մեկնելէն առաջ ամուսնական արարողութիւնը արագապէս կատարել տան։ Հրաւիրեալք կայարանին եղբը կը կենան, եւ դուցէ կրնան իսկ ազաչել շոգեգործիներն որ հարսին վրայ տպաւորութիւն մ'ընելու համար պարերգ մ'ընեն։ Կարծեմ թէ դործը վերջապէս հոն պիտի հասնի։

Ես հանդիսաւոր արարողութեանց ազդեցութեան հաւատալու միամտութիւնն ունիմ։ կատարուած գործն յարգելու կը պարտաւորեն զմարդ։ Յակամայից կ'զգայ բանի մը մեծութիւնը զոր չկրնար ճշդիւ որոշել, բայց կայ։ Արարողութիւնք խորհուրդը կ'զգացնեն։ անոնց միջոցաւ կարող կը լինիք մեր փոքրկութիւններէն վեր բարձրանալ։ Որչափ նուազ կարեւորութիւն տրուի արարողութեանց, ա՛յնչափ նուազ կարեւոր կ'երեւի կատարուած գործն։ Ա՛յս պատճառաւ է որ ամուսնութիւնը կորուսած է իւր հրապոյրն Եւրոպիոյ մէջ։

Հետաքրքրաշա՛րժ բան։ մեռելոց ընծայուած պատիւներն անփոփոխ կը մնան, հանրային արարողութիւնք կը յարգուին, սուգի վրայ ոչ ոք կը վիճի, որովհետեւ ողջերուն արարողութիւնները դիւրաւ կրնան ծաղրելի ընել, բայց մահուան առջեւ թոյլ կուտան սովորութեան շարունակել, և ամենէն լրջամիտ մարդիկ չեն քննադատեր տրտմական արարողութիւններն։

Արդի քաղաքակրթութեան մէջ լրջապաշտութիւնն ուրիշ ամեն պաշտամունք մէկ կողմ թողուց։ Ժամանակաւ յոյժ դեղեցիկ պաշտամունք կային, զորս հին գիրքերն ուսուցած են մեզ։ Ա՛յն ժամանակ մարդիկ առաւել ուղղակի հաղորդակցութիւն ունէին բնութեան հետ։ Ա՛յն վաղնջական նկարագրութեանց մէջ նմանութեան շատ կէտեր տեսած եմ մեր ներկայ բարուց հետ, որք եդրակացնել կուտան ինձ թէ փոփոխութիւնը յառաջդիմութիւն չեն, կամ գոնէ յոյժ քիչ անգամ յառաջդիմութիւն են։ Երբոր հին ժամանակի դեղեցիկ կերպարանքները կը դիտեմ, փիւարաղարդ փեղջյրներն և տաղնեկար վերարկուները, յոյժ ափեղ կը դանեմ այն սեւ խղճմտակն որ իրը գլխարկ կը ծառայէ, և այն տարօրինակ սեւ զգեստը զոր ամեն մարդ կը հագ-

նի, մանաւանդ սպասաւորաց զգեստը։

Գրաւ կը դնեմ որ եթէ հաղուստներու և սովորութեանց լիակատար պատմութիւնը գրուէր, պիտի տեսնուէր որ անոնց փոփոխութիւնները ծանր դէպքի մը կը համապատասխանեն։ Տեղական ամեն սովորութիւնք հայրենի հողին սէրը կը տածէին. զգեստն ատենանի պահպանման առիթ էր։ Այսօր արեւմտից ամեն երկիրներուն մէջ ամեն մարդ իրարու կը նմանին, և ոչ եւս կարեւորութիւն կը տրուի կերպարանաց։ Եթէ այս է բաղձացեալ յառաջդիմութիւնը, կատարեալ է, և ես զմայլմամբ կը դիտեմ առանց նախանձելու։

ՏԱՂ ԳԱՐՆԱՆ

(Օրինակեալ է հայերէն յեռաձիրաց մատենադարանէն Ս. ԺԸԸԷ-ից, որ է Բոլէղ)

Ահա եղեւ օրհնեալ դարուն,
Արժանացաք անրաւ բարոյն.
Երանի տամ պիւլպիւլ հաւուն,
Որ թըմբեալ կայ վարդին սիրուն։
Վարդն է բացուեր մէջ պաղջանուն,
Հաճելին ծաղկամբ գոյնզգոյն.
Պիւլպիւլն է տիւռանէ մէճլուն,
Վասն այն զմայլի վարդին սիրուն։
Երեւեցաւ ի մէջ այգոյն,
Զէտ արուսեակն առաւօտուն,
Ծագէ ի վերայ պիւլպիւլնուն.
Վասն այն զմայլի վարդին սիրուն։
Տիպն է վարդին՝ նըման արփոյն,
Յօղն ինչանէ առաւօտուն.
Բացուի տերեւն՝ քաղցրիկ հոտոյն,
Վասն այն զմայլի վարդին սիրուն։
Ի ճըղին բազմի վարդենեւոյն,
Մեշտ սպասէ բացուիլ զոնճանուն,
Կարմիր սպիտակ երանգ գունոյն.
Վասն այն զմայլի վարդին սիրուն։
Բաղցր եղանակ պիւլպիւլներուն,
Երգեն զանազան գոյնզգոյն,
Ի սիգ հանդարտ շընչել հողմոյն.
Վասն այն զմայլի վարդին սիրուն։
Էյ իմ եղբարք և հարք սիրուն,
Զայնակցեսցուք զհետ պիւլպիւլնուն.
Յիշեմք զԱւետիքն Կարպոսուն,
Նա մեք զմայլիմք միմեանց սիրուն։
Նաղելի պարոն Խաչատուր,
Աւետիքէ՝ որ եմ քեզ հիւր,
Ընկալ զերգս այս ատուաձատուր,
Յողեաց՝ ի քեզ Հոգւոյն աղբիւր։

ԱՒԵՏԻՔ ՊԱՏՐԻԱՐՔ
(Բաղմաքէպ)

ԳՈՌՆԷՅԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

«Այն օրն յորում մեծն Գոռնէյլ դադրի այլ եւս ժողովրդական լինելէ մեր թատերաբեմին վրայ, այն օրը մեք պիտի դադրինք մեծ ազգ մը լինելէ»։ Այսպէս կ'ըսէր երբեմն Նիզար. և հոկտեմբեր 11 ին Գոռնէյլի երկրորդ հարիւրամեակի առթիւ կատարուած շքեղ և սրտայոյզ հանդէսները վկայեցին թէ Ֆրանսա մեծ ազգ մը լինելէ չի դադրիր։ Քաղաքական խառնաշփոթի կացութիւն մը, երկոտայոյցի տագնապը, ներքին բազմաթիւ յուզմունք եւ պատերազմական թնդանօթից հեռաւոր որոտումներն չարգիլեցին Փարիզի ժողովուրդը ծափահարելէ Պոլէկոոն, եւ Ռուան կատարեց այնպիսի հանդէսներ իբր թէ ոսկեդարեան երջանիկ օրերու մէջ ապրէր։ Ի Ռուան, Գոռնէյլի ծընընդավայրը, կատարուած հանդէսք արդարեւ արժանաւոր եղան թէ՛ բանաստեղծին և թէ՛ քաղաքին։ Այդ հանդէսներն սկսան հոկտեմբեր 11 ին և տեւեցին երկու օր։ Յորդառատ անձրեւներն, որք ընդհանրապէս կ'ընկերանան Ֆրանսական մեծամեծ հանդէսներու, բաւական սրտազողի մէջ պահեցին զՌուանցիս որք կը փափաքէին մեծաշուք կերպով տօնել Գոռնէյլի յիշատակը։

Եթէ Գոռնէյլ Ֆրանսայի համար ազգային փառք մ'է, Ռուանի համար միանգամայն ընտանեկան փառք մ'է և ընտանեկան հպարտութեամբ մը «Մեծ Պատն» սկսած էին կոչել զնա։ Ի Փարիզ, Գոռնէյլի երկրորդ հարիւրամեակին տօնը գրական եղաւ մանաւանդ, ինչպէս պատշաճ էր։ Իւր բնիկ քաղաքին մէջ, ուզեցին տօնել զայն ժողովրդական տօնախմբութեամբ և կազմաւորեցին ամեն դասակարգի անձերէ բաղկացեալ թափոր մը որ դնաց Ռուանի զաւակաց նշանաւորագունին արձանին առջեւ դնել բուռն պանչացման և երախտագիտութեան մը մեծարանքները։

Փարիզ ալ մասնակցեցաւ այս հանդէսներուն։ Գործադիր մասնաժողովն, որոյ պատուոյ նախագահն էր Վիքթոր Հիւկօ, համակրալիր ընդունելութիւն և աջակցութիւն դտաւ ամեն ուրեք ուր դիմեց։ Ֆրանսական Ակադեմիայն, Գրագիտաց ընկերութիւնն և ուրիշ ընկերութիւնք արժանաւորապէս ներկայացեալ էին ի Ռուան։ Արուեստագէտներ, բանաստեղծներ բաղ-

մախուսմբ էին անդ։ Գոմէտի-Ֆրանսէզի դեբասանք ներկայացուցին Օռան և Սէրը։

Երբ Ռուանցիք իմացան թէ Գոռնէյլի տարեդարձի առթիւ իրենց քաղաքը պիտի լինէր ֆրանսական ամեն կարգի տաղանդներու ժամադրութեան վայր մը, նոր ոգի, նոր եռանդ զգեցան, եւ այնպէս ձեռն ի գործ արկին։ Ռուան բոլորովին կերպարանափոխ եղած էր. ամեն փողոց իւր յատուկ դրօշակն ունէր, ազգի ազգի վերտառութեամբք զարդարուն։

Գոռնէյլ իւր փոքրիկ տունն ունէր փոքր փողոցի մը մէջ, հին շուկային մօտ, որ այսօր իւր անունը կը կրէ։ Այդ տունն այժմ ոչ եւս է, և ախոռ մը յաջորդած է անոր։ Սակայն Գոռնէյլի տան դուռն, աղատելու բաղդն ունեցած է և քաղաքին թանգարանին մէջ կը դտնուի այժմ։ Մի միայն, բանաստեղծին տան երեսի կողման օրինակը չինուած էր հին փողոցին մէջ, և այցելուները եթէ այն համեստ բնակարանը չէին տեսներ, կրնային դէթ յիշատակն ունենալ իրենց մտաց մէջ։

Այլ մանաւանդ Հանրապետութեան փողոցն, ուր կանգուն է Գոռնէյլի արձանը, զգեցած էր յաղթութեան ճանապարհի մը տեսքը։ Մեծ ձողեր, պճնազարդեալ եռադոյն դրօշակներով, յորս կը փայլէին բանաստեղծին հրաշակերտաց վերնագիրք և ներկայացմանց թուականք, կը տեսնուէին իրարու մօտ։ Երփներանգ ծաղկեփունջեր կը պատկէին այդ ձողերն և կը ներկայացնէին ակնապարար երեւոյթ մը. իսկ գիշերն վենետիկեան լապտերք կը յօրինէին լուսեղէն կամար մը շլացուցիչ եւ դեղեցկատեսիլ։ Մաղիկներ, կանանչներ և դափնիներ պատած պաշարած էին բանաստեղծին ոգեշնչեալ արձանը։

Ինչպէս յիշեցինք, Գոմէտի-Ֆրանսէզի դեբասանները ներկայացուցին Օռան և Սբ-Պոխոսֆ մի քանի արարուածները։ Ատ պէտք է յիշատակել այն ջերմ ընդունելութիւնը զոր հասարակութիւնն ըրաւ այդ դերասանաց։ Ի սկզբան անդ ունկնդիրք յարդանօք և երկիւղածութեամբ լի էին քան կրքով։ Բայց տակաւ առ տակաւ սրահը տաքցաւ և ծափահարութիւնք պայթեցան։ Այդ ծափահարութիւնք իրենց գագաթնակէտն հասան երբ Մունէ-Սիւլլի իւր բարձր և թրթռուն ձայնով արտասանեց Սիւլլի-Բրիւտոմի առ Գոռնէյլ ուղղած բանաստեղծութիւնը։

Այլ բուն հանդէսը հոկտեմբեր 12ին կիրակի օր սկսաւ։ Բոլոր հրաւիրեալք առաւօտուն կանուխ, յատուկ կառավարով, դընացին այցելել Գոռնէյլի դիւղային տունն, ի Բըթի-Գուրոն։ Այդ տունը կը դտնուի դիւղին ճիշդ մէջտեղը, և վերջերս նորոգուած է։ Պ. Լամպէր, որ Ռուան ծնած է, սիրուն դամբարան մը արտասանեց բանաստեղծին այդ խոնարհ բնակարանին վրայ, եւ ուղեւորը քաղաք վերադարձան երեկոյեան մեծ ցոյցին պատրաստուելու համար։

Կէս օրէն երկու ժամ յետոյ, ամեն ոք լցուած էր Գոռնէյլ ուսումնարանին դափթէ։ Ռուանի քաղաքապետին և կառավարչին արտասանած մէկ քանի խօսքերէ յետոյ, Պ. Կասթոն Պուասիէ ոտք ելնելով՝ յանուն ֆրանսական Ակադեմիային հետեւեալն արտասանեց.

« Պարոնա՛յք,

« Ֆրանսական Ակադէմիայն չէր կարող անտարբեր մնալ այն մեծարանաց, զոր երկու դար վերջ, կը մատուցանէք Բիէր Գոռնէյլի։ Այլ մանաւանդ Ակադեմիայն երջանիկ է մասնակցելով այդ մեծարանաց, որովհետեւ այն պատիւն որով կը պատուէք իւր անդամներէն մին, կը ցայտէ ամբողջ դրականութեան վրայ։ Ինչ որ ալ ըսուի, դրագիտութիւնն իւր տիրապետութիւնը պահած է մեր մտքերու վրայ, ապա թէ ոչ, երբ այսքան մտահոգութիւնք մեզ կը պաշարեն, երբ կռիւներն այնքան բուռն են, երբ ատելութիւնք այնքան խորարմատ են մեր սրտերու մէջ, ի՞նչպէս կարելի կը լինէր որ այդ ամեն դրդռեալ կրքերը դադար առնուին և ամենայն կուսակցութիւնք ձեռք կարկառէին միմեանց՝ միասիրտ և միահոգի ոտնելու համար դրական ոտն մը։ Մատածեցէք, պարոնա՛յք, թէ այն մարդն որուն փառքն զմեզ ասա կը հանախմբէ, ո՛չ զինուոր մ'եղաւ, ո՛չ աշխարհավար մը, թէ երբէք բաժին չունեցաւ իւր երկրին գործոց կառավարութեան մէջ։ Ո՛չ հարուստ եղաւ, և ո՛չ ալ զօրաւոր։ Պարզապէս բանաստեղծ մ'էր, և երբէք չփորձեց դուրս ելնել իւր արուեստ-

տին, ինչպէս ինքն համեստաբար կը կոչէր, սահմաններէն։ Եւ սակայն կը տեսնէք թէ իւր յիշատակն ո՛րքան կենդանի է, ո՛րքան ժողովրդական, թէ ի՛նչպէս յամենուստ կը փութան դալ և մեծարել զնա։

«Եւ ինչո՞ւ մինչեւ ցարդ անվթար մնացած է Գոռնէյլի փառքը, մինչ ամեն ինչ իւր բոլորտիքն, խանդարուած աւերակ դարձած է։ Վասն զի երբ կը դրէր Թատրոնի համար, ուր հեղինակը կը հնազանդի ժողովուրդի հաճոյից և կը հպատակի նորաձեւութեան, Գոռնէյլ այնքան քաջասիրտ եղաւ որ իւր ժամանակի ճաշակին դէմ չը խոնարհեց և իւր ունկնդիրներու անհաճոյ լինելու վտանգին յանձնառու եղաւ, որպէս զի հաճոյ լինի ապագայ սերնդոց։ Մինչ իւր մրցակիցք բաւ կը համարէին դրդռել հանդիսականաց հետաքրքրութիւնը, չնորհիւ բաղմակնճիռն հանդոյցներու և ամենէն այլանդակ դրուագներ միմեանց վրայ բարդելով, Գոռնէյլ փնտռեց շահեկանութիւնը կրքերու մրցմանց և սրտի նկարագրութեան մէջ։ Տեսարանի վրայ հանեց կենաց ճշմարիտ պատկերներ, և զի անխոտոր է մարդկային հոգին, անփոփոխ մարդկային կեանքն, ինչ ձեւեր ալ զգենու, ուրեմն Գոռնէյլ գրեց դարերու համար։ . . . . . .

«Եւ այժմ, պարոնայք, Գոռնէյլի փառքը կը թեւակոխէ իւր երրորդ դարուն մէջ և կրնայ թեւակոխել աներկիւղ։ Անցեալն ապագային երաշխաւորն է։ Ցորչափ ապրի մեր լեզուն, ցորչափ Ֆրանսա պահէ դըրական ճաշակը, կրնանք վստահ լինիլ թէ երբեք ձանձրոյթ չպիտի պատճառէ մեզ Գոռնէյլի գործոց ընթերցումը։ Միշտ պիտի կարդանք զանոնք և զմայլինք։ Առանց յանդուգն համարուելու՝ կրնանք կանխատեսել թէ երբ բոլորի այս դարն ալ, մեր յաջորդք վերստին պիտի համախմբին ատ՝ մեզ նման երկիւղածութեամբ տօնելու Գոռնէյլի երրորդ հարիւրամեակը։»

Այնուհետեւ բանաստեղծական զանազան դրուագներ կարդացուեցան։ Ջերմաջերմ ծափահարութիւնք կ'արտայայտէին հանդիսականաց սրտի յուզումն և երախտագիտութիւնը։

Ռուանի քաղաքապետը հետեւեալ նամակն ստացած էր Վիքթոր Հիւկոյէ, որով մեծ բանաստեղծը ներողութիւն կը խնդրէր հարիւրամեակի տօնին ներկայ չկարենալ գտնուելուն համար։

«Պարոն Քաղաքապետ,

«Փարիզ կը հասնիմ, կ'իմանամ ձեր այցելութիւնն և կ'ստանամ ձեր նամակը։

«Ձեմ կարող այս վայրկենիս Ռուան երթալ, բայց ձեզ հետ եմ սրտով, և ձեզ հետ կը փառաւորեմ մեծ բանաստեղծը, Թատրոնի պարծանքը, Ֆրանսայի պատիւը։

ՎԻՔԹՈՐ ՀԻՒԿՈ»

Գոռնէյլի երկրորդ հարիւրամեակը չէ կարող զմեզ անտարբեր թողուլ մի քանի կարդ նկատումներով։ Առաջինն այն է թէ չնորհիւ մեծ բանաստեղծին՝ բարիզեան բազմայոյզ կենաց մէջ այնքան զօրաւոր հնչեց վերջին օրերս մեր անունն։ Յայտնի է ամեն բանասիրաց, որ Գոռնէյլի հրաչակերտներէն միոյն նիւթը վեր առնուած է մեր պատմութենէ։ Երկրորդ հարիւրամեակի առթիւ Պոլիկոսը ներկայացուցին ի Բարիզ, իբր ամենէն յարմարագոյնը ժամանակի պահանջմանց համապատասխանող։

Բայց Գոռնէյլի երկրորդ հարիւրամեակի հանդէսները պէտք որ ազդեցութիւն ընեն մեր վրայ։ Երբ Ֆրանսա, որ այնքան բազմաճոխ է հեղինակներու մասին, կը փութայ Գոռնէյլի մը տարեդարձը տօնել, ո՛չ ապաքէն մեք որ այնքան աղքատ ենք այդ մասին, պէտք է դիտանք մերայնոց յարգը։ Մեզնէ ո՞վ մի քիչ աշխատութիւն յանձն կ'առնու դէթ փոքր յիշատակ մը նուիրել հայ դրագիտաց տարեդարձներուն։ Ատեն մը Պէշիկթաշլեանի մահուան տարեդարձն ուխտադնացութեան օր մ'էր անոր շիրմին վրայ, և սակայն այժմ աղոր եւս յոդնութիւն կ'զդանք։ Իցէ՛ թէ չմոռնայինք դէթ այդ մին։ Լ. Բ.

ՎԷՊ

ՄԱՏԼԷՆԻ ՄԵՂՔԸ

Զ.

(Շարունակութիւն Տես թիւ 3738)

Նամակին պատասխանին սպասելով կը շարունակէինք մեր մեծ դիտաւորութեան վրայ խորհրդակցելու, մեր երթալու բնակելու դաւառին ընտրութիւնն ընելու, և թէ ո՛ր անտառները պատսպարան և հովանի պիտի ըլլային մեր վախտական կեանց։ Բաւական գործունէութիւն կրցի ունենալ և առաձգական զօրութիւն մը, ճանբու պատրաստութիւնները ընելու։ Պատասխանը հասաւ աւետելով մեզի թէ հոկտեմբեր 30ին շոգենաւ մը պիտի մեկնէր դէպի Նիու Եօրք և Բոպէր փութայ մեզի համար մէջը սենեակ վարձել տալու։ Եօթը օր ունէինք տակաւին, բայց այնքան կ'ճատապրէինք ճանբայ ելնելու որ որոշեցինք անմիջապէս թողուլ մեր բնակած խրճիթը և կարճ օթեւանօք ուղեւորիլ։

Երկրորդ օրը երբ գնեց տանող կառքին մէջ Բոպէրին քովը նստայ՝ գոհութեան և մխիթարութեան մեծ շունչ մը առի։ Աշնան զով և պայծառ առաւօտ մ'էր, թեթեւ ճերմակ եղեամը կը ծածկէր թուփերն ու խոտեր և վայրուն ցօղի կաթիլներու կը փոխուէր՝ քանի որ արեւը կը բարձրանար։ Երկայն և թափանցող նայուածքներ կը թարթէինք միգամած հոլտաց խորերը, քանի որ բլրոց արեւանունք վճիտ օդին մէջ կը թանային։ Թեւերնիս երկնցնելով կրնայինք բրցնել անցած ժամանակնիս ճանբուն վրայէն ժանտափուշ մնատղալար ծառի չիկարմիր թաւ ոստեր կամ ճանբուն եղերքը տնկուած՝ պահապան զօրաց պէս տողանի յոյր ու կարճուկ և ոստաքանց կաղնի ծառոց տերեւներ։ Մեր կառքի փոքրիկ ձին կողերը տնկուած ուրախ զուարթ կը քայլէր իւր բոժոժները հնչեցնելով՝ մինչդեռ իւր տէրը քթին տակէն մելամաղձոտ երգ մը կը սուլէր։ Դաշտային կենաց անդորրութիւնը ինձ կը վերադառնար. շատոնց է որ այնքան թերթեւութիւն զգացած չունէի։ Այսպէս ճանապարհորդելով Պրընթանիայէն անցանք և յետոյ Նորմանտիայէն, հասարակաց կառքերէն և մեծ պողոտաներէն ըստ կարի խոյս տալով և նախամեծար դասելով դարձապատոյտ ճանբաներէն անցնիլ։

Աղատաբար կը հաղորդէինք իրարու մեր ունեցած տպաւորութիւնները. շատ անդամ նայուածք մը, ժպիտ մը բաւական կ'ըլլար։ Այս քանի մը օրուան մէջ կարծես թէ երանութեան տուեր մը վայելեցինք. բայց մարդկային հոգին հնարագէտ է իրեն տանջանքներ ստեղծելու, հաղար ու մէկ եղանակ ունի միւսնոյն վէրքով չարչարուելու։

Քանի որ մեր ճանապարհորդութեան վերջը կը մօտենար, աղէկէզ յիշատակ մը ղէմս կը կանգնէր։ Լուիզ կ'երեւար ինձ ամեն կողմ. ամեն անծանօթ կին որ քովերնէս կ'անցնէր, ինա կը կարծէի. դիշերը քովէս չէր պակսեր, և անդադար կը հառաչէր. այդ սիրուն պատկերը ինձ վրէժխնդիր ուրուական մը դարձաւ...։ Բոպէրի Լա Բոշ ի-վոն հասնելէն ի վեր՝ նորա վրայօք բան մը լսած չէի։ Բարիզէն մեկնած պահուս թէեւ ինձ արգիլած էր զայդ՝ բայց դարձեալ միտքը դրեր էի հօրեղբօրս գրելու. կենաց նոր ձեւ մը տալու պէտքը և Բոպէրի վրայ հասնիլը՝ այդ նամակը յետաձգելու պատճառ եղան։ Քիչ մը տաեն անցնելէն վերջը՝ ալ չի համարձակեցայ, ի՞նչ կրնայի իրեն գրել։

Ծովեղերքը քանի մը օր սպասելու համար անցուցած միջոցնիս, առանց Բոպէրին իմացնելու, Վիլիէրնիյի աւազերեցին ուղղուեր էի լուր խնդրելու համար, բայց պատասխան չէի ընդունած։ Թերեւս մերձակայ դիւղի նամակատունը տանող դեղջուկը գրած թուղթս կորուսեր էր, թերեւս ալ Վիլիէրնիյի աւազերեցը նամակիս պատասխանելու արժանի չէր տեսած։ Շատ անդամ Լուիզը մեռած կ'երեւակայէի և այդ մոռածութիւնը դիս դրեթէ կը խենդեցնէր։

Վեցերորդ օրը ցերեկին ընդարձակ դաշտին վրայ կկղած Նորմանտիոյ հին քաղաքներէն մէկը հասանք, իւր գոթացի եկեղեցեաց բարձրաբերձ սլաքօքը հանդերձ մթնադոյն և տխրաւեսիլ։ Հավը երթալու համար՝ անկից շոգենաւ պիտի մտնէինք, որն որ երկու օրէն ճանբայ պիտի ելնէր.

Բոպէր ինձ առաջարկեց ի միասին դուրս ելնել, բայց յոգնած զգալուս ինքզինքս՝ թողուց զիս, խոստանալով քիչ ատենէն վերադառնալ։ Երբ առանձին մնացի այդ պանդոկի ցուրտ և մութ խուցին մէջ որն որ մի միայն ժամանակէն մինցած մերձակայ տուներուն, միանդամայն առանց զբաղութեան բազմաշշուկ ըլլալով՝ օձապըտոյտ ճամբու մը վրայ կը նայէր, ինձ ընտանի դարձած ուրուականներս դարձեալ վրաս յարձակեցան, ջանացի զլրենք ի բաց վանել։ բոլոր ճիգս դժբաղդաբար, ինչպէս որ ընդհանրապէս կը պատահի, խանդարեալ երեւակայութեանս վրայ աւելի բբռնանալու ծառայեց իրենց, այնպէս որ չը կրցի դիմանալ, գլուխս բռնկած, կուրծքս ճզմուած արտորնօք գլխարկ մը դրի և շալի մը փաթթուելով դուրս նետուեցայ։

Արագ արագ, բան մը չտեսնելով, դէպ ուղիղ ընդ առաջ ընթացայ։ դրսի օդը և շարժումնքս՝ տակաւ առ տակաւ զովացուցին իմ հրդեհեալ ճակատս։ Ներքին եռանդը երակներուս մէջ հանդարտեցաւ։ Անծայր անեզր դաշտադետնին վրայ տարածուած՝ ընդարձակ մարդադետնի մը կարծես գօտի ընդ մէջ ածեալ, երկուստեք բաղմադարեան ծառեր տնկուած՝ երկայնամիջ ճանբու մը վրայ կը գտնէի ինքզինքս։ Հովը, աւելի խոնաւ քան թէ ցուրտ, ոստաքանց սօսիի լայն տերեւներ կը թաւալէր՝ աչքիս առջեւ փոշւոյ ամպ մը փոթորկելով։ երկինքը թուխ թուխ ամպեր յափշտակեալ՝ արշաւասոյր կը վարդէին։ Այլ երկայնամիջ պողոտայները ամայի էին և այդ առանձնութիւնը ինձի հաճոյ երեւցաւ։ ընթացքս դանդաղեցուցի, օրը տարժամած էր և ես բնաւ չէի խմացեր։ արդէն շատոնց մեկնած էի պանդոկէն՝ երբ սկսայ անդրադառնալ։ Ուզեցի ետ դառնալ և անդադար քայլելով՝ վերջապէս նաւահանգստին առջեւ դտայ ինքզինքս։

Ծովը մակընթացութենէ բարձրանալու վրայ էր և յետս կը մղէր այդ դետակը որ զայրացած՝ խարսխի վրայ դանուող նաւերը կը տատանէր, շառաչիւն ալեակք քարափին որմոց բախելով կը ծփային։ ընդ երկար դիտեցի զանոնք։ լապտերներուն աղօտ լոյսը և նաւերուն վրայ վառած ածուխի շառագոյն բոցերը կը ցոլանային սեւաթորմի ջուրին մէջը։ նաւաստիները ստուերներու պէս առջեւնուն կ'անցնէին կը դառնային։ Ոչ ոք զիս կը տեսնէր, ոչ ոք ինձմով կ'զբաղէր։ Երկինքը կը մթնար, խաւարը երթալով կը սաստկանար։ քանի որ օրը կը տարաժամէր խորհուրդներս մրրկեալ ալեաց պէս կը խուժէին, մէկ մը դէպի երկինք կը նայէի մառախլապատ, մէկ մ'ալ դէպ ի սեւ ծովն անդնդախոր։ — Աչուքներս փակեմ, կ'ըսէի, և դէպ ուղիղ յառաջ ընթանամ։ քայլ մը, երկուք, շատ շատ երեք քայլ և անհետ ըլլալ բոլորովին և թերեւս դտնել զհանդիստ... ո՛չ զիտէ... ոչ ոք այնուհետեւ իմ վրաս խօսիլը պիտի ըսէ։ դժբաղդ աղջիկ մը որ ինքզինքը ծովը ձգեր է խղդուելու համար, տխուր եւ հասարակ բան մ'է։ բայց միթէ իւր տարժամուին հետ փախչիլը նոյնչափ տխուր և հասարակ բան մը չէ՞...։ Գիտեմ Ռոպէր շատ պիտի վշտանայ, բայց գոնէ ես իւր վշտանալը ալ չպիտի տեսնեմ։ և սակայն միշտք և ցաւք մշտատե՞ւ են միթէ... Դեռ երիտասարդ է, մարդկային կեանքն ալ երկարատեւ... Բայց միթէ հանդիստը իրօք հոն այդ պաղ ջուրին նեքե՞ւն է։ Իրա՞ւ է որ ուրեմն այսպէս մեր ամէն տեսակ չարչարանք և ապէսից առ ձեռն պատրաստ դարման մը ունինք, միանդամայն մեր խիղճին փախուստ տալու և մեր ըրածներուն համար պատասխանատուութենէ զերծ մնալու ապաստանարան մը։ Ո՜հ, եթէ գիտնայի որ մահուանէս ետքը իմ էութենէս բան մը չպիտի մնայ։ ուրիշ անդամներ լսեր եմ զայդ հաստատելին, ինչպէս կըլլայ որ չեմ կրցեր հաւատալ։ Ո՞րն է ուրեմն իմ էութեանս այդ մասը որ ոչնչութեան դէմ կը բողբոջէ ինչպէս որ երբեկ նոյն իսկ դեռ քիչ մը առաջ կը բողբջէր իմ մեղապարտ ընթացքս դէմ։ Միթէ մարմինը դէ՞մ պիտի ելնէ մարմնական բերմանց, միթէ չ'ուզենա՞յ պիտի հնազանդիլ անոր օրինաց... Ա՜հ անդութ դաղանիք, ինչո՞ւ համար զիս կը փորձես։

Անձրեւը այդ միջոցին իբր աղէխարշ արտասուք խոշոր կաթիլ կաթիլ կ'ինկնար, հապա քանի մը յետամնաց անցորդներ կը շտապէին՝ ինքզինքնին պատսպարելու համար չէնքերուն անմիջապէս քովէն անցնելով։ Պզնձէ սիւնակի մը կոթնած, որուն վրայ փաթթեր էին նաւու մը պարանները՝ շարժումնք մը ընելու քաջութիւնը չէի ղդար։

Սակայն Բոպէր ինձ կ'սպասէր, կը դուշակէի իւր մտատանջութիւնը, բայց ի՞նչ ճար · — Խիղճը թունաւորեալ սէր մը տածել իրեն համար, և արիութիւն չունեցող սրտի մը վատ դառնութիւնները դդալ, ոչ ապրելու և ոչ մեռնելու քաջութիւնը ունենալ, կ'ըսէի ինքնիրենս, ի՞նչ պիտի ըլլայ իմ վերջս · · · ։

ԲՕԼ ԱԼՊԱՆ

(Շարունակելի)

Յ· Գ· Նախորդ թուոյն Մասիսի վիպասանութեան ոտանաւորի չորրորդ տողին մէջ տպագրական սխալմամբ «մոշայս» բառը «մոշայս» պէտք է ընթեռնուլ և երկոտասաներորդ տողին սկիզբը նոյնպէս «Դեռնանան» բառը «Լեռնանան» պէտք է կարդալ։

ՔԱՂՈՒԱԾ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

6–12 ՀՈԿՏԵՄԲԵՐ

—o—

ԱՐՏԱՔԻՆ

—

Ֆրանսայի Խորհրդարանն հոկտ· 14ին սկսաւ իւր աշնային նստաշրջան։ Երեսփոխանական Ժողովոյն մէջ Ծովային Նախարարը ծրագիր մը՝ ներկայեց, խաչեր և շքանշաններ տալու համար Թոնքինի և Մատակասքարի արշաւանաց մասնակցող արժանաւոր զինուորաց և նաւաստեաց։ Պատերազմական Նախարարն ներկայեց աւելի կարեւոր ծրագիր մը որով կուզուի Գաղթային յատուկ բանակ մը կազմել որոյ բուն պաշտօնը պիտի լինի պաշտպանել Ֆրանսական գաղթականութիւնը։

Նախարարութիւնը Թոնքինի արշաւանքին համար 10,811,000 ֆրանքի վարկ մը խնդրելուն առթիւ բացատրեց թէ անցեալ օգոստոս ամսոյ մէջ քուէարկեալ 38 միլիոն ֆրանքը պիտի գործածուէր սպառազինելու 38 մեծ ու փոքր մարտանաւեր, 5,530 ըսպայիւք եւ նաւաստեօք, նաեւ այս տարի Թոնքինի մէջ 10 հազար եւրոպացի եւ 6 հազար բնիկ զօրք պահելու։ Օգոստոսի վերջն ալ 5 հազար եւրոպացիք Ֆրանսա պիտի վերադառնային։ Բայց Թիէն–Զինի դաշնադրոյն բռնաբարումն և Զինասանի բռնած ընթացքն արդէլք եղան զօրաց նուազեցուցման, եւ պէտք ցուցին չորս մեծ մարտանաւեր եւս ղրկելու։ Այժմ խնդրուած 10,811,000 ֆրանքի վարկն այս 5 հազար զինուորաց եւ հազարի չափ ֆրանսացւոց համար է, որով միայն այս տարի Թոնքինի համար եղած ծախսը կը հասնի 69 միլիոն ֆրանքի։

Պ· Ժիւլ Ֆէրրիի խնդրանաց վրայ, Երեսփոխանական Ժողովը 191ի դէմ 294 ձայնիւ մերժեց առաջարկ մը որ կը պահանջէր երեւան հանել կառավարութեան կողմէ Թոնքինի համար խնդրուած վարկի Յանձնաժողովոյն եղած դաղտնի յայտարարութիւնները։ Ժողովոյ մեծամասնութիւնը տրամադիր է Նախարարութեան խնդրած բոլոր վարկերը տալ, Թոնքինի գործոց շուտով վերջ տալու համար։

— Եգիպտական կառավարութիւնը դիտաւորութիւն կը ցուցնէ, կըսէ Թան, չյարատեւելու քմահաճ ընթացքին մէջ ուր մտած էր՝ դադրեցնելով եգիպտական պարտուց գլխավճարն։ Ելմտական Նախարարութիւնն հրաման տուած է որ երկաթուղեաց և հեռագրաց հասոյթք նորէն Ընդհանուր Պարտուց սնտուկին վճարուին հոկտ· 16ին, և միւս հասոյթներն ալ յիշեալ Սնտուկին յանձնուին հոկտ· 26էն սկսեալ, ըստ խոստմանց սեպտ· 18ի հրամանագրոյն, որ կը-սէր թէ գլխավճարի դադարումն առժամեայ պիտի լինի։

Հոկտ· 12ին նախարարաց յատուկ խորհուրդ մը տեղի ունեցաւ ի Գահիրէ, յորում Խիվը նախարարներուն հաղորդեց նամակ մը զոր ինք ուղղած էր առ Նուպար փաշա, յայտարարելով թէ Եգիպտական կառավարութիւնն ինքզինք պատասխանատու կը նըկատէ Նուպար փաշային և Ելմտական Նախարարին նիւթական հատուցումմը տալու, եթէ Միջազգային Դատարանք անոնց անձնական կալուածներն ու ստացուածքը դըրաւել տան գլխավճարի դադարման պատճառաւ։

— Կը հաստատուի թէ Վանովքի զօրավարն ի մօտոյ պիտի հրաժարի Ռուսիոյ պատերազմական Նախարարի պաշտօնէն, վատառողջութեան պատճառաւ։ Բժիշկներն աւելի մեղմ կլիմայ մը կը յանձնարարեն, ուստի Կաւկասիոյ ընդհանուր կառավարիչ պիտի անուանի։ Հաւանօրէն Կուրքօ զօրա-

վարն, այժմ Բոլոնիոյ ընդհանուր կառավարիչ, պատերազմական նախարար պիտի անուանի։

— Ֆրանսական զօրքերը փայլուն ճակատամարտէ մը յետոյ, հոկտ. 10ին գրաւեցին Զինացւոց մեծ բանակատեղին ի Շիւ, Լօշնան գետին բարձանց վրայ։ Զինացիք 3 հազար հոգի կորսնցուցին. իրենց սպարապետը մեռեալներուն մէջ կը գտնուի. բանակին մնացեալ մասը Լանկսոնի ուղղութեամբ փախաւ։ Ֆրանսացիք 20 մեռեալ և 90 վիրաւորեալ ունեցան։ Զինացւոց այս կատարեալ փախուստը վերջացած նկատել կուտայ չինական արշաւանքն ի Թոնքին։

— Նիւ Եօրքի Ռամկավարականք հոկտ. 10ին Միդինկ մ'ըրին ի յատադովութիւն Պ. Գլիվլէնտի՝ իրենց ընտրելոյն ի Նախագահութիւն հանրապետութեան Միացեալ Նահանգաց։ Հարիւր հազար անձինք ներկայ էին։ Ատենաբաններէն մին ըսաւ թէ Հանրապետականաց եւ Ռամկավարականաց միջեւ կռիւը մաքսային պաշտպան դրութեան պահպանման վրայ չէ, այլ «Անդամներն երկրին վարչութեան գլխէն վռնտելու վրայ» է։ Այս գումարման մասնակցողք գիշերը ջահերով թափոր կազմած շրջեցան փողոցներուն մէջ։

— Հնդկաստանի նոր փոխարքայն ամսոյս 25ին Լոնտոնէ կը մեկնի՝ Վիկտորիայի և Թրիէսթի ճամբով Պոմպէյ երթալու համար։ Թրիէսթի նաւահանգստին մէջ անգլիական մարտանաւ մը պիտի սպասէ յատկապէս Լորա Տըֆրինի համար։ Ամսոյս 3/15ին տեղի ունեցաւ իւր հայրենակցաց կողմէ իրեն տրուած ծանուցեալ ճաշն ի Պէլֆասթ։

— Վիլհէլմ Կայսրը Պերլինի Մատենադարանին ընծայեց արաբական հին գրականութեան ճոխ հաւաքածոյ մը, 1,052 հատորներու մէջ պարունակուած 1,600 կըտոր աշխատութիւններէ բաղկացեալ։ Այս ձեռագրաց հնագոյնը Քրիստոսէ առաջ 1058 թուականին կամ աւելի առաջ գրուած է, և կը կոչուի Քէնապ-էլ-Ֆելահէ, կամ «Գիրք Երկրագործութեան», հեղինակութեամբ հռչակաւոր Իպն-Վահշիյէի։ Էյտյանի գրավաճառ մը զայն գնած էր Երեւելի Շուէտցի արեւելագէտ Տօքթ. Լանտպերկէ, որ շատ ժամանակ ուղեւորած և բնակած է ի Սուրիա և յԵգիպտոս։ Հանրածանօթ արաբագէտ Պ. Ահլվարտ ուսուցչապետը Լէյպզիկ ղրկուեցաւ քննելու այս ձեռագրեր և յայտարարեց թէ շատ կարեւոր են։ Ելմտական նախարարն յայնժամ խորհուրդ տուաւ Կայսեր՝ գնել զայս հաւաքածոյ իւր տրամադրութեան թողուած դումարէն եւ Վիլհէլմ Կայսրն համեցաւ գնել և ազգային Մատենադարանին նուիրել։

— Տասն և չորս Ոչնչականներ, յորս կային վեց սպայք և աղնուական դասէն հրուշակաւոր յեղափոխականուհի Տիկ. Ֆիկնէր, դատուեցան Բեղրասլուրկի Դատական Պաշտօնատան սրահներէն միոյն մէջ պատերազմական Ատենի մ'առջեւ։ Աւասիկ քաղաքական դատաստան մը, որ կարեւորութեան կարգաւ Ալեքսանդր Բ. Կայսրն սպանողներուն դատէն անմիջապէս յետոյ կուգայ։ Ոչ նուազ քան վեց սպայք կայսերական բանակի՝ ամբաստանելոց մէջ կը գտնուէին։ սոցա գլխաւորն էր գնդապետ Աշէմպրընէր, երբեմն հրամանատար զօրագնդի մը ի հարաւային Ռուսիա, Ոչնչական գաղափարաց յոյժ վտանգաւոր ծաւալիչ մը բանակին մէջ, և տեսակ մը հսկող քննիչ իւր կուսակցութեան։ Նաեւ իւր համախոհք որոշած էին ռուսական զօրքն Յեղափոխութեան կողմն անցուցնել՝ ծաղելուն պէս։ Ապա կուգան երեք Ոչնչականուհիք, նախ դեղանին և խեղանին Տիկ. Ֆիկնէր, կամ Վէրա Ֆիլիբովա, որ 1878էն ի վեր տեղի ունեցած քաղաքական ամեն սպանութեանց կամ սպանութեանց փորձերուն մէջ գլխաւոր շարժիչ անդամներէն մին եղած էր իւր կուսակցութեան։ Կաւկասիոյ զօրաց մէջ և այլուր այս սիկնոյ ցոյց տուած գործունէութիւն Ռուսիոյ Յեղափոխականաց պատմութեան մի մասը կը կազմէ։ Ալեքսանդր Բ. Կայսեր սպանումէն յետոյ, կը բնակէր Քիրիչնի փողոցին մէջ սպայի մը հետ, և կը պատսպարէր զՍուխանով և Կայսրն սպանելու փորձ փորձող Սոֆիա Բերովսքին։ 27 տարեկան է։ Իրմէ ետքը կուգան ուրիշ երկու կանայք, Վոլքէնշդայն և Զէմոտանովա անուն, դերմանացի և ռուս Յեղափոխականուհիք։ Ամբաստանելոց մէջ կան նաև երեք որդիք քահանայներու։ Վեց սպայից ոմանք թնդանօթաձիգ և նաւային զինուորական են։ Ամբաստանելոց մի քանին Սուէյքին դնդապետն սպաննող Տէկանէֆին

աքօղեր են։ Երեք հանրածանոթ փաստաբանք կ'երեւին ամբաստանելոց պաշտպանների մէջ։

Յիշեալ վեց սպայք և տիկնայք Ֆիկնէր և Վոլքէնշդայն ի մահ դատապարտեալ են, և միւս ամբաստանեալք՝ շղթայակապ աշխատութեան ի Սիպերիա։ Բայց այս ամէն կարեւոր եղելութեանց վրայ բառ մ'իսկ դեռ չհրատարակեցաւ Ռուսիոյ լրագրաց մէջ։ Նիստը դռնփակ էր, միայն բարձրաստիճան ինն անձինք ընդունուեցան դատարանը։ Մահու պատժոյն դործադրումն ալ, — եթէ Կայսրն ուրիշ թեթեւագոյն պատիժ չսահմանէ, — նոյնպէս դաղտնի պիտի լինի հաւանօրէն։

ՆԵՐԲԻՆ

—

Յունաց նորընտիր Պատրիարք Տ. Յովակիմ Դ. երկուշաբթի օրը Թարասիայէն յատուկ շոգենաւակով Տօլմա-Պաղչէ իջաւ, և անտի կայսերական կառօք Եըլտըզի պալատն ելաւ։ Հետն էին նախորդ տեղապահ Տ. Աղաթանգեղոս, պատրիարքական երկրորդ ընտրելի Տ. Դիոնէսիոս մետրոպոլիտը, Լաղոթէթ պէյ, Պատրիարքարանի դործակատար Սթավրաքի էֆէնտի։ Ս. Պատրիարքը պալատան վերատեսուչ Միւշիրին սենեակը քիչ մը հանդիստ առնլէն յետոյ, Ն. Կայսերական Վեհափառութեան ներկայացնելով՝ յունարէն լեզուաւ խօսք մ'արտասանեց, զոր ի թուրքերէն թարգմանեց Լաղոթէթ պէյ, և որուն պատասխանել հաճեցաւ Օդոստ. Սուլթանն, յայտարարելով թէ համակիր է առ հաւատարիմ Յոյն հպատակս իւր, եւ դոհ է Տ. Յովակիմ Դ.ի պատրիարքական ընտրութենէն, որոյ բարեմասնութիւնք ծանուցեալ են։

Օդոստ. Սուլթանը բարեհաճեցաւ առաջին աստիճանի Մէճիտիյէ պատուանշան շնորհել Ս. Պատրիարքին։

Ս. Պատրիարք հայրն յետ այսորիկ ելնելով Ն. Վեհափառութեան ներկայութենէն, Փաշա-Տայիրէսին դնաց ուր մեծարանք ու ընդունելութիւն եղաւ։ Ապա դարձեալ կայսերական կառօք Ղալաթիոյ ճանապարհաւ Բ. Դուռն երթալով՝ այցելեց Մեծ-Եպարքոսին, Ներքին, Արտաքին և Դատական դործոց նախարարաց և Պետական խորհրդոյ նախագահին, և շնորհակալութիւններ մատուցանելով՝ մեկնեցաւ։

Ժամը տասն էր երբ պատրիարքական թափորն սկսաւ դէպ ի Ֆէնէր երթալ։ Փողոցներն այն աստիճան խռնեալ էին բազմութեամբ որ կառքերը կը հարկադրէին յամրաբար յառաջանալ։ Հուսկ ուրեմն Պատրիարքարանի դուռն հասան և ոստիկանք ու թաղապետական պաշտօնեայք մեծ դժուարութեամբ ճանապարհ բանալով, Ս. Պատրիարքը կրցաւ կառքէն իջնել և Մայր եկեղեցի մտնել ուր կատարեցաւ դահակալութեան արարողութիւնն ըստ հնաւանդ սովորութեան։ Երբ Յովակիմ Դ. ամբոռէն ելաւ, եկեղեցւոյն բոլորտիքը թափոր շրջելու եւ Պատրիարքարանի մեծ սրահն ելնելու համար, ժողովուրդն որ տաճարին շուրջը խռնեալ էր, ցնծագին աղաղակներ բարձրացուց։ Ն. Սրբազնութիւնը դժուարաւ կարող էր քայլել և յուղեալ ու խոնջեալ լինելով, պահ մը տկարութիւն զդաց եկեղեցւոյն դրան մէջ, բայց սինհոդականք զն. Սրբազնութիւնը շրջապատելով, Պատրիարքարանի սրահն հանեցին, մինչ ոստիկանք մեծ դժուարութեամբ կը կասեցնէին մի քանի տաք դլուխներ որք կուզէին բարձեալ տանիլ իրենց Պատրիարքն։

Օրուան յոգնութիւններէն պահ մը հանդչելով, Ն. Սրբազնութիւնը բաղմեցաւ պատրիարքական աթոռոյն վրայ, և Ս. Սինհոդի ու ազգային ժողովոյ անդամք, մի քանի դեսպանատանց թարգմանք և բազմաթիւ յոյն երեւելիք ներկայանալով իրենց շնորհաւորութիւնները մատուցին։ Երեկոյին, ուշ ժամանակ, հագիւ բազմութիւնը ցրուեցաւ եւ Տ. Յովակիմ Դ. կրցաւ հանդչիլ։

— Ռումանական դեսպան Պ. Մավրոյէնի չորեքշաբթի օրն այցելութիւն տուաւ Յունաց նորընտիր Պատրիարքին ի Ֆէնէր. Ն. Վսեմութիւնն ընդունեցին Մեծ. Լաղոթէթ Սրիսթարքի պէյ և պատրիարքարանի պաշտօնեայք, որք ներկայացին զնա առ Յովակիմ Դ. որոյ հետ տեսակցեցաւ իբր կէս ժամ։

Այնուհետեւ Վսեմ. դեսպանը դնաց ի Պէշիքթաշ յայցելութիւն Դեր. Տ. Խորէն Արքեպիսկոպոսի Նար-Պէյ։ Ն. Սրբազ-

նութիւն ընդունեց զդեսպանն Ռումանիոյ պարտուպատչան մեծարանօք։ Դեսպանն և Արքեպիսկոպոսն ծանօթ են միմեանց ի Պուքրէշ։

— Յունաց հրաժարեալ Պատրիարքն երեքշաբթի օրը կայսերական պալատը գնաց ի շնորհաւորութիւն տարեգլխի, և երբ կը վերադառնայր, դարձեալ պալատն հրաւիրուելով Նորին կայսերական Վեհափառութեան ներկայանալու պատիւ ունեցաւ։ Օգոստ. Սուլթանը 7,500 ղրուշ ամսաթոշակ յատկացուցած է նախկին Պատրիարքին։ Ն. Սրբազնութիւն յաջորդ օրը Ֆէնէրի Պատրիարքարանը գնաց ի շնորհաւորութիւն Նորընտիր Պատրիարքին։

— Կայսերական անձնական գանձուն նախարար Վսեմ. Յակոբ փաշայի Վէզիրութեան հրովարտակն այսօր հանդիսիւ կը կարդացուի Նորին Վսեմութեան ապարանաց մէջ ի Բերա։

— Անցեալ երեքշաբթի Հիմրէթի 1302 տարւոյ առաջին օրն լինելով, նախարարք և բարձրաստիճան պաշտօնատարք կայսերական պալատը գնացին ի շնորհաւորութիւն։

— Պետական խորհրդոյ դատական ճիւղին ընդհանուր դատախազ Ճէմիլ պէյ վերաքննութիւն պահանջեր է, Սէլանիկի նախորդ կուսակալ Հասան Թահսին փաշայի և այլ մի քանի պաշտօնատարաց դէմ բացուած դատին մէջ յիշեալ տեղի կողմէ տրուած վճռոյն դէմ։ Հետեւաբար նախորդ կուսակալն և միւս ամբաստանեալք վերըստին ի դատ պիտի կոչուին։

— Հալէպի տոմարակալն, Մէքթուպճին, ժանտարմայի հրամանատարն, ընդհանուր դատախազն և այլ պաշտօնակալք գանգատանաց հեռագրեր ուղղեր են մայրաքաղաքս 7–8 բարձրագոյն տեղեր՝ Հալէպի կուսակալ Ճէմիլ փաշայի դէմ։ Կուսակալն ալ ժանտարմայի հրամանատար Շահին փաշայի դէմ գանգատած է։

— Պետական խորհուրդը մօտերս կ'սկսի դատել՝ Պրուսայի Էվալէի ծանուցեալ խնդրոյ մէջ ամբաստանեալ պաշտօնատարներն, յորս է Պրուսայի կեդրոնական կառավարիչ Հայտար փաշա ալ։

— Եէմէնէն առնուած լրոց նայելով՝ ապստամբապետ Շէրէֆէտին, Զէֆիրի ամրոցին կայսերական զօրաց ձեռքն անցնելէն յետոյ, իւր կուսակցաց մէկ մասին հետ Ճէպէլ Էհնում կոչուած լեռը քաշուեր է։ Թուրք լրագիրք կ'իմանան թէ անցեալ շաբթու Սպարապետութեան կողմէ Եէմէն զրկուած 1200 զօրքերն այդ գաւառին մէջ բարեկարգութիւնը վերահաստատելու պիտի աշխատին։

— Իզմիտէն տրուած պաշտօնական վերջին տեղեկութեանց նայելով՝ Կեսարիոյ թղթատարութեան կարաւանին վրայ յարձակող աւազակաց 13ն ալ բռնուեր են, և ընդամենն այսչափ են, եւ ի սկզբան չափազանցութեամբ 40–50 նշանակուած է նոցա թիւն։

— Կրթական նախկին նախարար Միւնիֆ բաշա յանձն առած է ձրիաբար քաղաքական տնտեսութեան դասախօսութիւն ընել առեւտրական Համիտիյէ վարժարանին մէջ։

— Օսմանեան կայսերական Պանքան այս օրերս դարձեալ 50 հազար ոսկւոյ փոխառութիւն մը պիտի ընէ երմտական պաշտօնատան։

— Բեղրսպուրկի լրագիրք գրած են, թէ Ռուսիոյ կառավարութիւնը Մանտուրօֆ անուն պաշտօնակալ մը ղրկած է Երուսաղէմ, օրթոտոքս ուխտաւորաց վիճակն եւ տեղւոյն բարեպաշտական հաստատութեանց միջոցները քննելու եւ տեղեկագրելու պաշտօնով։

ԱԶԳԱՅԻՆ

Քաղաքական ժողովոյ ատենապետ Վսեմ. Սիմոն պէյ Մագուտեան՝ Խառն ժողովոյ յանձնարարութեան համաձայն Ամեն. Ս. Պատրիարք Հօր երթալով, Նորին բարձր սրբազնութեան կամքն ու կարծիքն հարցուցեր է՝ պատրիարքական առժամեայ Տեղապահի մը ընտրութեան համար։ Ս. Պատրիարք Հայրն յայտարարեր է, թէ անհրաժեշտ հարկ է անյապաղ կատարել այդ ընտրութեան գործն, և ժամ յառաջ Պատրիարք մ'ընտրել, վասն զի ոչ եւս կարող է ինքը պատրիարքական պաշտօն վարել։

Ս. Պատրիարք Հայրը միեւնոյն յայտարարութիւնն ըրեր է անցեալ ուրբաթ Կրօ-

նական ժողովոյ ատենապետ Գեր. Տ. Խորէն Արքեպիսկոպոսի ալ, յատկապէս կոչել տալով զՆորին Գերապատուութիւնն, երբ այցելութեան տոմարն ստորագրած կը մեկնի եղեր։ Ս. Պատրիարք Հայրը կրկներ և երեքներ է նոյն յայտարարութիւնը, խնդրելով որ հաղորդէ ազգային վարչութեան. բայց Գեր. Նար-Պէյ միշտ պատասխաններ է թէ ինքը Նորին Արքազնութեան առողջական վիճակին վրայ տեղեկութիւն առնելու եկած էր, և թէ՝ ազգային որ և է խնդրոյ վրայ բանակցելու պաշտօն չունի։

— Կրօնական ժողովը շրջաբերականաւ յանձնարարեց մայրաքաղաքիս եկեղեցեաց քարոզչաց՝ պատուիրել քահանայական դասուն, որ եթէ այսուհետեւ լրագրաց մէջ իրենց դէմ ո՛ր և է հրատարակութիւն տեսնուի, ինքնին ուղղակի չպատասխանեն իրենք, այլ ծանուցանեն Կրօնական ժողովոյ՝ ի պարտուպատշաճ տնօրինութիւն։

Կրօնական ժողովոյ այս կարգադրութեան պատճառ եղած են՝ վերջին օրերս քահանայից ոմանց կողմանէ ի լրագիրս հրատարակեալ պատասխաններ, որ պատշաճ ու վայելուչ համարուած չեն։

— Ատանայի կուսակալութեան Դատական քննչին կողմէ, Դատական Նախարարութեան տեղեկագիր մը եկած է հեռագրով, որ կը հաստատէ Հաճնոյ ծանուցեալ ամուսնութեան բռնութեամբ կատարուած լինելն, խոստանալով ասոր վերաբերեալ պաշտօնական տեղեկութիւններն յառաջիկայ թղթաբերով հաղորդել Նախարարութեան։

— Ազգային ժողովն այս ուրբաթ նիստ ըրաւ ի Ղալաթիա, ընդ ատենապետութեամբ Տիգրան էֆէնտի Եուսուֆեանի, և յետ մի քանի ատենական գործողութեանց, լսեց Հաճնոյ բռնի ամուսնութեան խնդրոյն առթիւ Կրօնական ժողովոյ կողմէ առ Կիլիկիոյ Տ. Մկրտիչ կաթողիկոսն ուղղեալ դիրքն, ի պատասխանի նախապէս եղած հարցման մը։ Հարցման տէրը, Կ. Արվանեան էֆէնտի՝ այս առթիւ յայտարարեց թէ՝ Դատական Նախարարութեան տեղեկագիր մը եկած է հեռագրով, որ կը հաստատէ ամուսնութեան բռնութեամբ կատարուած լինելն և Կրօնական ժողովոյ ուշադրութիւնն հրաւիրեց այս առթիւ հետեւելի ընթացքին վրայ։ Ժողովը գոհ լինելով Կրօնական ժողովոյ բացատրութիւններէն, անցաւ Պէկեան էֆէնտիի երեսփոխանական վաւերացման, որոյ վրայ խօսեցաւ Ց. Գուրգէն էֆէնտի իբր մէկ ժամ։ Ժողովոյ փակման ժամն հասած լինելով, վիճաբանութեան շարունակութիւնը թողուեցաւ յաջորդ նստին։

— Դատական ու Կրօնական գործոց Նախարար Վսեմ. Հասան Ֆէհմի փաշա Երուսաղեմայ Ամեն. Տ. Եսայի Ս. Պատրիարք Հօր հետ տեսակցութիւն մը պիտի ունենայ առաջիկայ շաբթու։ Նորին Վսեմութիւնն ինքն ուղեր է տեսակցիլ Տ. Եսայի Ս. Պատրիարք Հօր հետ և տեսակցութեան առարկայ լինելիք խնդիրն յայտնի չէ։

— Ազգային Դատաստանական խորհրդոյ դիւանն հետեւեալ կերպիւ կազմուած է.

Նախագահ՝ Պատրիարքական Գեր. Փոխանորդ.

Ա. Ատենապետ, Մելքոն էֆէնտի Պարոնիկեան.

Բ. Ատենապետ, Գէորգ էֆէնտի Փանոսեան.

Ա. Ատենադպիր, Տ. Արիստակէս քահանայ Մամբրէեան Սամաթիոյ.

Բ. Ատենադպիր, Տ. Գաբրիէլ քահանայ Խանճեան, Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ։

— Յաւէտ խնացանք թէ Զէյթունի վերջին հրդեհին ժամանակ հրոյ ճարակ եղեր է նաեւ Հայոց Միացեալ ընկերութեանց երկսեռ վարժարանաց շէնքն։

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՔ

— • —

Պրուսէլ, 23 հոկտ.

Մալուի կղերամիտ նախարարութիւնն հրաժարական տուաւ։

ԲԱՑՈՒՄՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՅԱՆԳԼԻԱ

Լոնտրա, 25 հոկտ.

Խորհրդարանին բացումն այսօր տեղի ունեցաւ։ Թագուհւոյն ճառն յոյժ կարճ եղաւ։ Ի բաց առեալ բարենորոգման միակ ծրագիր մը՝ Թագուհւոյն ճառն ոչ մէկ կարեւոր յայտարարութիւն կը պարունակէ անգլիական կառավարութեան արտաքին աշխարհավարութեան վրայ։

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

NORTH BRITISH AND MERCANTILE
Insurance company
ՆՈՐԹ ԲՐԻԹԻՇ ԷՆԴ ՄԷՐԲԸՆԹԱՅԼ

Լոնդրայի և Էդինբուրգի ապահովութեան ընկերութիւն

		Անգլ. Լիր.
Արտօնեալ դրամագլուխ		3,000,000
Բաժանորդագրեալ դրամագլուխ		2,500,000
Վճարեալ »	625,000	
Պահեստի դրամ հրդեհի պատահականութեանց դէմ	1,592,235	
Կեանքի պատահականութեանց դէմ պահեստի դրամ	3,841,194	
		6,058,429
Հրդեհի ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ	1,186,865	
Կենաց ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ	551,307	
		1,738,172

NORTHERN
Assurance company
ՆՕՐԹ ՀԸՐՆ

Լոնդրայի և Էդինբուրգի ապահովութեան ընկերութիւն

		Անգլ. Լիր.
Բաժանորդագրեալ դրամագլուխ		3,000,000
Վճարեալ »	300,000	
Պահեստի դրամ հրդեհի պատահականութեանց դէմ	811,871	
Կեանքի պատահականութեանց դէմ պահեստի դրամ	1,778,300	
		2,890,171
Հրդեհի ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ	520,206	
Կեանքի ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ	251,572	
		771,778

Ստորագրեալն իւր բաղմաթիւ յաճախորդաց և քաղաքիս ընդհանուր յարգոյ հասարակութեան կը ծանուցանէ թէ ինքն վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրութեան մը մէջ կը գտնուի, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանէ։

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելնալովն Ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բռնողներու ինքզինք ներկայացնել։

Գրեթէ ամէն կարգի վտանգաւոր ապահովութիւնք կրնան ընդունիլ, ինչպէս Բերայի, Ղալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն և գաւառները։

MARITIME
Insurance Cie limited of Liverpool
Capital Lt. 500,000
ՄԱՐԻԹԱՅՄ

Ծովային ապահովութիւն ընկերութիւն

Դրամագլուխ 500,000 Անգլ. Լիրա

Ստորագրեալը, շոգենաւներու և առագաստանաւերու մէջի վաճառքներն ու կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած է ընկերութեան կողմէ։

Գիներուն և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուզողք պէտք է դիմեն Կալաթա, Քօմիսիօն խանի անկիւնը՝ երկաթէ կամուրջին վրայ նոյող սենեակն, առ.

Կ. Պոլսոյ Ընդհ. Գործակատար յիշեալ Ընկերութեանց

ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ

ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

ՌԸԼԻԷՆՍ

Ծովային ապահովագրութիւն։ –Դիմել առ գործակատարն ընկերութեան, Պ. Ժ. Վ. Ուիլիամ, Եօրկիատիս խան Պահչէ – դարու, Պոլիս. կամ Ղալաթիա, Սէլէքսիատի խան թիւ 15։

ՏՕՔԹԷՕՐ Ն. ԱՅՎԱԶԵԱՆ

Մասնագէտ կանանց եւ տղայոց հիւանդութեանց

Կը գտնուի ամեն օր ժամը 7էն մինչ 11 Պոլիս Եէնի Ճամիի մէջ կայսերական նամակատան դիմաց Նոր Եօրքի դեղարանը։ Իսկ կիւրակէ օրերը կէս օրէն վերջը Բերա Ասլան փողոց թիւ 1 իր տունը։

ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ
ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ
(Նոր դրութիւն)

—o—

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ.— Երկու հատորէ բաղկացեալ, որ կը պարունակէ՝ Ոճ, հանդերձ բառագիտական և մտամարզական վարժութեամբք։

Ցօրէնէաց

ՄԻՀՐԱՆ Պ. ԱՍՔԱՆԱԶԵԱՆ

Ուսուցիչ հայկական լեզուի և դրագիտութեան։

Գին իւրաքանչիւր հատորի, 10 դահեկան։

Կը ծախուի Պօլսոյ բոլոր Հայ գրավաճառաց քով և կամուրջի գլուխը սուճի Պողոս աղայի խանութը։

Կը գտնուի նաեւ, Ղալաթիոյ կողմը, թղթավաճառ Ց. Արշակ էֆէնտիի քով։

Կեդրոնատեղին է Արամեան դրատուն, Ցակոբեան խան, վերնայարկ թիւ 12–13։

Դպրոցաց համար 100 ին 10 դեղչ։

ՊԱՐԶ ՕՐԱՑՈՅՑ
1885 ՏԱՐԻՈՑ
Սեփհականութիւն
Ս. ՓՐԿՉԻ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ
Գին Մէկ դահեկան

Կը գտնուի ի Մեծ Նոր խան, միջնայարկ թիւ 49, Հիւանդանոցի Հոգաբարձութեան դրասենեակը և բոլոր Հայ դրավաճառաց քով։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

ՈՒՍՆՈՏՈՒԹԻՒՆ
ՄԿՆԱԶԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՋՂԱԶԳՈՒԹԻՒՆ

Բոլորովին կը բուժին իմ դրութեամբս

Սակը կ'ընդունուի փոքրն յաջողապէս կատարուելէ յետոյ։

Բժշկութիւն թղթակցութեամբ

ՈՒՍՈՒՑԻՉ Տ. ԱԼՊԷՐ

Ֆրանսական Գիտական ընկերութենէն պատուեալ առաջին կարգի ոսկեայ շքադրամով, վասն արժանեաց։

6, Բլաս տիւ Թրոն, Փարիզ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ԱՐԴԻ ԼԵԶՈՒԻ

Բաժանեալ ի յիսուն և հինգ դաս

Ցօրինեալ ըստ Նորագոյն դրութեան
Ի պէտս հայկազն ուսանողաց
Ի ՏԻՄԻԹՐԻՈՍ ՁՕԼԱԳԵԱՆԷ
Գին 10 դահեկան

Կը գտնուի բոլոր հայ դրավաճառաց քով։

ՏՕՔԹ. Ժ. ՍԱԳՍ

Մանկաբարձ բժիշկ՝ վկայեալ Պեռլինի համալսարանէն, մասնագէտ՝ իգական սեռի հիւանդութեանց համար։ Տօքթ. Սագս որ նոր եկած է Պերլինէն, կը բնակի Բերա, Վենետիկ փողոց, թիւ 5, Շէյխ էֆէնտիի նորակառոյց շէնքին մէջ։ Հիւանդ կընդունի առաւօտեան ժամն 8–10 և երեկոյեան ժամը 12–3 (ըստ Եւր)։

Ժամը 10էն 12 Բրիտանական դեղարանը կը գտնուի և ժամն 3էն 5 Պոլիս, Սեբիւդ դեղարանն։ Ջղային հիւանդութեանց համար ելեքտրական գործողութիւնք կը կատարուին։ Մանրադիտական գործանոց։

Աղքատ հիւանդք ձրիաբար կը դարմանուին։

Արտօնատէր Կ. Ս. ԻԹԻԹՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ